

Սեյրան Զ. Գրիգորյան  
Բանասիր. գիտ. թեկնածու

**«ԱՄԵՆՏԻ ԵԶԵՐՔԸ» ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ  
ՊՈՆԶԻԱՅՈՒՄ  
ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ\***

**Բանալի բառեր** – Ամենտի, Եղիշե Չարենց, հին եգիպտական պոեզիա, «Մեռյալների գիրք», Օսիրիս, Անու-բիս, հանդերձյալ աշխարհ, դիցաբանություն, Դուսատ, խորհրդապաշտություն, Կոնստանտին Բալմոնտ:

Մուտք

1919 թ. Եղիշե Չարենցը ստեղծում է Կարինե Քոթանձյանին նվիրված «Տաղ անձնական» բանաստեղծությունը, որի նախավերջին տան մեջ գրում է.

**Բայց շուրջս թող որքան կուզե աշխարհը այս խնդա, ցնդի –  
Ես – հաշմանդամ ու խելագար ու հավիտյա՛ն վտարանդի՝  
Դեպի երկի՛նք պիտի գնամ, դեպի եզերքը Ամենտի –  
Իմ բա՛րձր, հին ու աստղային երազների ճանապարհով՝...**

Այս հատվածում տեղ գտած «**Ամենտի**» բառը Եղիշե Չարենցի ստեղծագործության մեջ հանդիպող ամենից ինքնատիպ գեղարվեստական միավորներից մեկն է: Վստահաբար կարելի է ասել, որ մեծատառով գրվող այդ անսովոր հասկանունը ո՛չ Ե. Չարենցից առաջ, ո՛չ նրանից հետո չի օգտագործվել որևէ հայ գրողի կողմից: Այսինքն՝ Ե. Չարենցը հայ ընթերցողների և անգամ գրականագետ-

\* Հոդվածն ընդունվել է տպագրության 30.04.2022:  
1 **Չարենց Ե.**, Երկերի ժողովածու վեց հատորով, հատ. 1, Եր., Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1962, էջ 298:

ՎԷՎ համահայկական հանդես, ԺԴ (Ի) տարի, թիվ 2 (78), ապրիլ-հունիս, 2022

ների մեծ մասին անձանոթ (կամ միայն իր՝ Ե. Չարենցի գործերից ծանոթ) այդ խորհրդավոր բառի միակ կիրառողն է ամբողջ հայ գրականության մեջ:

«Ամենտի» բառը տեղ չի գտել հայոց լեզվի բառարաններից ոչ մեկում, նույնիսկ հայերեն հանրագիտական ամենամեծ բառարանում՝ «Հայկական սովետական հանրագիտարանում», և նեղ մասնագիտական «Գրականագիտական բառարանում»: Ուստի ընթերցողներից շատերը չեն կարողանում վերահասու լինել նշանավոր բանաստեղծության մեջ հնչող արդեն մեկ դարից ավելի հանրածանոթ այդ բառի ո՛չ գեղարվեստական նշանակությանը, ո՛չ անգամ բառիմաստին և կազմությանը:

Ի՞նչ է նշանակում «Ամենտի»: Հազարավոր ընթերցումներ ունեցած, բազմիցս արտասանված այդ բառը ինչպե՞ս է հայտնվել երիտասարդ բանաստեղծի տեսադաշտում և բառապաշարում: Գեղարվեստական ի՞նչ նշանակություն ունի այն, ինչպե՞ս է առնչվում «Տաղ անձնական» բանաստեղծությանը և առհասարակ Ե. Չարենցի քնարերգությանը:

Այս հարցերի պատասխանները գտնելու համար պետք է նորովի ընթերցենք Եղիշե Չարենցի բնագրերը: Պետք է խորամուխ լինենք «Ամենտի» երևույթի ծագումնաբանության մեջ, գտնենք և վերլուծենք դրա դրսևորումները համաշխարհային գրականության մեջ, փորձենք կռահել դրանց հետ Ե. Չարենցի գործերում **«Ամենտի եզերք»** կամ **«Ամենտի երկիր»** կնքված խորհրդանիշի ունեցած ուղիղ և միջնորդավորված առնչությունները:

## 1. «Ամենտի» խորհրդանիշի հայտնությունը Եղիշե Չարենցի պոեզիայում

Չարենցագետները և առավել ուշիմ ընթերցողները գիտեն կարևոր մի փաստ: Որքան էլ տպավորիչ և հանրածանոթ է «Տաղ անձնական» բանաստեղծության վերոհիշյալ հատվածը, այն «Ամենտի» բառապատկերի միակ կիրառությունը չէ Ե. Չարենցի պոեզիայում:

«Ամենտի» բառը՝ որպես գեղարվեստական իմաստավոր խորհրդանիշ, Ե. Չարենցի ստեղծագործության մեջ հայտնվել է «Տաղ անձնական»-ից երեք տարի առաջ՝ 1916 թվականին: Դարձյալ

Կարինե Քոթանձյանին նվիրված և ընծայականով նրան ձոնած «Բանաստեղծություններ. Ծիածանը» ժողովածուի երկրորդ բանաստեղծության («**Հոգին չի մեռնում...**») վերջում Ե. Չարենցը դրել է «**916 թ. Մոսկվա**» թվագրումը և աջ կողմում ավելացրել. ««**Ամենտի**» գրքից»<sup>2</sup>:

Սա կարծես թե «Ամենտի» բառի առաջին կիրառությունն է Չարենցի ստեղծագործության մեջ: Ինչպես կտեսնենք ավելի ուշ, այս բանաստեղծությունը, հետևաբար նաև հղացված, բայց չամբողջացած գիրքը ամփոփում են Ամենտիի թեման՝ հանդերձյալ կյանքի մոտիվը, և գլխավոր գաղափարը՝ հոգու անմահության երազանքը: Բայց հենց իբրև փաստ՝ չարենցյան Ամենտիի հայտնությունը հետաքրքրական է թե՛ ինքնին, թե՛ նրանով, որ բանաստեղծը պատրաստվում էր գրելու այդ վերնագրով մի ամբողջ գիրք:

Առհասարակ Եղիշե Չարենցի բազմաբեղուն ստեղծագործությունը հատկանշվում է հղացված, բայց չիրագործված կամ չամբողջացած գրքերի առատությամբ («Գազելներ», «Լյուսի Թառայանին», «Մարդերգություն» ժողովածուները, «Ապստամբություն» չափածո վեպը և այլն): Դրանցից յուրաքանչյուրը հետաքրքրական է, բայց ամենից ուշագրավը հենց «Ամենտի» գիրքն է: **Նախ**՝ այն առաջինն է Ե. Չարենցի ազդարարված, բայց չգրված գրքերի շարքում: **Երկրորդ**՝ այն առավել ինքնատիպն ու առեղծվածայինն է իր անսպասելի վերնագրով: «Ամենտի» վերնագրով բանաստեղծություններն արդեն իսկ հազվադեպ են համաշխարհային պոեզիայում, իսկ ամբողջական գիրք կամ ժողովածու այդ վերնագրով չկա: Եթե Ե. Չարենցը տրամադրվեր և ամբողջացներ իր նախնական մտադրությունը, մենք կունենայինք «Ամենտի» վերնագրով միակ գիրքը համաշխարհային գրականության մեջ: **Երրորդ**՝ հակառակ լիովին ամբողջացած չլինելու հանգամանքին և չափազանց մեծ յուրահատկությանը՝ «Ամենտի» գիրքը խիստ ներդաշնակ է Եղիշե Չարենցի ստեղծագործության ամբողջական բնագրին: Այդ գրքի հղացումը դիտելի է հեղինակի ստեղծած գրականության համատեքստում երկու առումով:

Ընդհանրական իմաստով նկատելի է, որ Ամենտի եզերքի կենտրոնական մոտիվը հանդերձյալ, անդրաշխարհային կյանքի պատկե-

2 Չարենց Ե., Բանաստեղծություններ. Ծիածանը, Մոսկվա, 1917, էջ 8:

րումն է: Հետագա շարադրանքում հարցը հանգամանորեն վերլուծելուց առաջ նախապես արձանագրենք, որ **Ամենտի եզերքը կամ երկիրը (երկու բնորոշումն էլ Ե. Չարենցն օգտագործում է) Հին Եգիպտոսում հանդերձյալ կյանքի դիցաբանական խորհրդանիշն էր, մարդու մահվանը հաջորդող այնկողմնային աշխարհը կամ անդրաշխարհը:**

Անդրաշխարհը (հանդերձյալ կյանքը) Ե. Չարենցի ստեղծագործության մեջ ի սկզբանե և մինչև վերջ եղել է գեղարվեստական հղացումների անսպառ նյութ: Նույն 1916 թ. ստեղծված «Դանթեսկան առասպել» պոեմում Ե. Չարենցը ցեղասպանության հետևանքով կործանված Հայաստանը պատկերում է անդրշիրիմյան կյանքի քրիստոնեական ըմբռնմամբ՝ այն այլաբանորեն ներկայացնելով որպես իտալացի մեծ բանաստեղծ Ալիգիերի Դանթեի պատկերած անդրշիրիմյան կյանքի, ավելի որոշակիորեն՝ դժոխքի համաբանություն:

Եղիշե Չարենցի ստեղծագործության մեջ հին Եգիպտական անդրշիրիմյան աշխարհի և քրիստոնեական դժոխքի գրեթե միաժամանակյա հայտնությունը ունի ներքին տրամաբանություն: Եգիպտագետների կարծիքով՝ Օսիրիսի՝ որպես հանդերձյալ կյանքի աստվածության պաշտամունքը, ինչպես ամբողջ Եգիպտական մշակույթը, զգալի ազդեցություն է թողել քրիստոնեության վրա: Եգիպտագետ Միլիցա Մատյոն գրում է. «Օսիրիսի պաշտամունքը մեծ ազդեցություն է գործել քրիստոնեության, մի շարք ծեսերի ձևավորման, քրիստոնեական սրբապատկերների շատ կերպարների ստեղծման վրա: Անկասկած է օսիրիսյան միստերիաների ազդեցությունը հարության ծիսակարգի, Օսիրիսի դատի ազդեցությունը ահեղ դատաստանի քրիստոնեական պատկերագրության, ստորգետնյա թագավորության ուսմունքի և Օսիրիսի թշնամիների մահապատժի ազդեցությունը դժոխքում մեղավորների կրած տանջանքների քրիստոնեական ուսմունքի վրա...»<sup>3</sup>:

Հետագա տարիներին նույնպես Ե. Չարենցը տարբեր ձևերով անդրադառնում է հետմահու կյանքին առնչվող հարցերին: 1925 թ. գրած «Հանգուցյալ պարոնը կամ պարոն հանգուցյալը» երգիծական պատմվածքում նա գաղափարական հակառակորդին ներկայացնում է իբրև մահացած, բայց հետո վերակենդանացած էակի: Այսպ

3 Матъе М. Э., Древнеегипетские мифы, М.-Л., Изд. АН СССР, 1956, с. 63.

ծաղրում է անդրաշխարհի հետ նրա ունեցած առնչությունը հետևյալ մտահայեցությանը. «Այս բոլորից բացի հիշեցի, սակայն, նաև այն, որ դեռևս Երևանում մի շարք տերտերներ, տիրացուներ և այլ, սպիրիտիզմի հետ այս կամ այն առնչություն ունեցող մարդիկ ասում էին, որ Հանգուցյալ Պարոնն այն մյուս աշխարհում ևս հրատարակում է «Հույս Երկնային և Աստվածային» անունով մի թերթ, որում ևս, ըստ հին սովորության, պարբերաբար գրում է հոդվածներ ու առաջնորդողներ՝ այս անգամ արդեն նվիրված հոգեհարցության (սպիրիտիզմի) մի շարք առաջնակարգ հարցերին, որպիսիք են մեռելների հարությունը, հոգու անմահությունը, ասեղ դատաստանը և այլն»<sup>4</sup>:

Երկու տարի հետո գրած «Երևանի ուղղիչ տնից» արձակ ստեղծագործության մեջ Ե. Չարենցը դարձյալ շոշափում է հանդերձյալ կյանքի թեման, իսկ 1933 թ. ստեղծված «Մահվան տեսիլ» պոեմում խորացնում է անդրաշխարհի քրիստոնեական ըմբռնումը և Հայոց ցեղասպանությունը Դանթեի դժոխքի հետ համադրելու այն գեղարվեստական հնարանը, որ մոտ երկու տասնամյակ առաջ կիրառել էր «Դանթեական առասպել» պոեմում:

Չամբողջացած «Ամենտի» գիրքը Եղիշե Չարենցի ստեղծագործության համատեքստին ներդաշնակ է նաև նրանով, որ այն ընդհանուր հղացումով և փաստացի իրագործված դրվագներով սերտորեն կապված է բանաստեղծի ինքնաստիպ ու բնութագրական երկու գործերի՝ «Ծիածանը» բանաստեղծական ժողովածուի և «Տաղ անձնական» բանաստեղծության հետ: ««Ամենտի» գրքից» նշագրումից բացի՝ Ե. Չարենցը գրել և «Ծիածանի» «Մայրամուտային. Կապույտի կարտր. Գազելներ սիրած աղջկա համար» շարքի հենց սկզբում իբրև նախերգանք տեղադրել է մի փոքրիկ գազել, որն ուղղակի վերնագրել է «Ամենտի երկրում».

**Քեզ կհասնեմ, քույր իմ, ես – Ամենտի երկրում:  
Երբ հուշ դարձած կրքնես – Ամենտի երկրում...**

**Կրհամբուրեմ, ջինջ այնպես, շրթունքներդ ես, –  
կրհամբուրեմ, քո՛ւյր իմ, քեզ – Ամենտի երկրում...**

<sup>4</sup> Չարենց Ե., Երկերի ժողովածու վեց հատորով, հատ. 6, Եր., Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1967, էջ 139:

**Մեռած աստղի լույսի պես, որ ժպտում է մեզ –  
դու իմ հարսը կրկինես – Ամենտի երկրում<sup>5</sup>...**

Նույն էջի տողատակում հեղինակը տվել է հետևյալ ծանոթագրությունը. «**Ամենտի – Մայրամուտային, Անդրշիրիմյան եզերք՝ Եգիպտական միֆալոգիայում**»<sup>6</sup>: Ճիշտ է, 1922 թ. հրատարակած «Երկերի» առաջին հատորում Ե. Չարենցը հանել է այդ ծանոթագրությունը (ի դեպ, «Մայրամուտային» բառը հանել է նաև շարքի վերնագրից, որը կրճատվել և դարձել է պարզապես «Գազելներ»), բայց դա չի նշանակում հրաժարում Ամենտիից: Ե. Չարենցը պահպանել է այն, պարզապես հանել է «Ամենտի երկրում» վերնագիրը և տեղաշարժել բանաստեղծությունը՝ այն սկզբից տանելով վերջնամաս և դարձնելով շարքի նախավերջին՝ 24-րդ բանաստեղծությունը<sup>7</sup>:

Նույն շարքի 11-րդ գազելում Ամենտի խորհրդանիշը հայտնվում է ևս մեկ անգամ՝ արդեն «եզերք» բառի համադրությամբ.

**Քո՛ւյր, դողանջի՛ պես ճախրել ու գնալ,  
հմայված ու հեզ – ճախրել ու գնալ...**

**Երկնքից–երկինք, իրիկվա մովում,  
անմարմին, անտես – ճախրել ու գնալ...**

**Գեպի Ամենտի եզերքը կապույտ –  
քո՛ւյր, դողանջի պես ճախրել ու գնալ<sup>8</sup>...**

Սա «Ամենտի եզերք» բառակապակցության առաջին հայտնությունն է Եղիշե Չարենցի պոեզիայում: Երկրորդը և վերջինը կլինի «Տաղ անձնական» բանաստեղծության մեջ: Երկու տարի հետո հիշելով և տառացիորեն կրկնելով խորհրդապատկերը՝ բանաստեղծը ցույց է տալիս իր հավատարմությունը Ամենտի եզերքի խորհրդանի-

5 **Չարենց Ե.**, Բանաստեղծություններ. Ծիածանը, էջ 50:

6 Նույն տեղում:

7 Տե՛ս **Չարենց Ե.**, Երկերի ժողովածու, հատ. 1, Մոսկվա, Պետական հրատ., 1922, էջ 125:

8 **Չարենց Ե.**, Բանաստեղծություններ. Ծիածանը, էջ 56:

ջին: Թեև «Տաղ անձնական» բանաստեղծությունը գրված է ուրիշ ոճաբանությամբ և ժանրով, մի քանի կողմերով մոտենում է «Ծիածանին»:

1. Երկու գործերում էլ կենտրոնականը, բանաստեղծական հորինվածքի կիզակետը Ամենտի եզերքն է՝ հակառակ այդ խորհրդանշական պատկերի նվազ հաճախականությանը:

2. Ե՛վ «Ծիածան» գիրքը, և՛ «Տաղ անձնական» բանաստեղծությունը նվիրված են նույն էակին՝ Կարինե Քոթանձյանին, որը երկուսում էլ հանդես է գալիս անվանապես: Թեև առաջին դեպքում նա հիշատակվում է ընծայականի մեջ (**«Իրիկնային քրոջս – Կարինե Քոթանձյանին»**), իսկ երկրորդ դեպքում՝ հենց չափատողերում (**«Եվ Կարինե Քոթանձյանին անգամ չասած մնաս բարով»**, **«Թե Կարինե Քոթանձյանին տեսնեք Կարսի փողոցներում»**), բայց երկու պարագայում էլ Ամենտի եզերքի գաղափարը կապվում է սիրած աղջկա հետ:

3. Երկու ստեղծագործություններում էլ Ամենտի եզերք հասնելը քնարական հերոսի գլխավոր երազանքն է: «Ծիածանում» այն դրսևորվում է սիրած էակին հասնելու և Ամենտիում միավորվելու, իսկ «անձնական» տաղում՝ նրանից հեռանալու տարբերակով, բայց երկու պարագայում էլ հոգու անմահության գաղափարը մեկնաբանվում է սիրո տիրույթում:

4. Իր ամենից նվիրական երազանքներից մեկը խոստովանելով կամ վստահելով հատկապես սիրած աղջկան՝ Ե. Չարենցը մտերմիկ քնարական երանգ է հաղորդում «Ամենտի եզերքին»: «Ծիածանի» հիշյալ գործերում այդ մղումը հասցված է բացարձակի և արտահայտված է սիրած աղջկա հետ «քույր» դիմելաձևով հաղորդակցվելու գեղարվեստական հնարանքով: «Տաղ անձնական» բանաստեղծության մեջ **«քույր»** բառը և երկխոսային խոսքը բացակայում են, բայց **«Իեպի երկինք պիտի գնամ, դեպի եզերքը Ամենտի»** գազաթնակետային միտքը ձևակերպելուց անմիջապես հետո Ե. Չարենցը միջնորդավորված խոսք է հղում Կարինե Քոթանձյանին (**«քույր»** դիմելաձևը քանիցս հանդիպում է դարձյալ Կարինե Քոթանձյանին նվիրված «Հեռացումի խոսքեր» բանաստեղծության մեջ, որը ստեղծվել է «Ծիածանը» գրքի հետ գրեթե միաժամանակ՝ 1917 թ.):

5. Ամենտի եզերքին նվիրված պատկերներում Եղիշե Չարենցը բանաստեղծորեն արտահայտում է երջանկության որոնման, հոգու անմահությանը հասնելու փիլիսոփայական գաղափարը: Այդ առումով բնորոշ է նաև նրա գործերում առկա կյանք-մահ հակադրությունը, ըստ որի՝ իրական կյանքը ակնհայտորեն ստորադասվում է մահվանը, բայց այն մահվանը, որ տանում է դեպի Ամենտի, այսինքն՝ դեպի հավերժություն: Մահվան նման միֆականացումը ակնհայտ է նույնիսկ այն բանաստեղծություններում, որոնց մեջ ո՛չ որպես բնագրային միավոր, ո՛չ որպես վերնագիր կամ տողատակի ծանոթագրություն որևէ կերպ նշված չէ «Ամենտի» բառը: Այդպիսին է հատկապես **«Մահը, գիտե՛ս, մի լուսավոր առասպել է, քո՛ւյր»** գազելը.

**Մահը, գիտե՛ս, մի լուսավոր առասպել է, քո՛ւյր,  
Կյանքը այնքան մեղկ ու անգույն ու անբեր է, քո՛ւյր:**

**Մահը անուշ, անբջալույս տրտմություն ունի.  
Կյանքը սակայն շաչող, փախչող, անհամբեր է, քո՛ւյր:**

**Կյանքի կանչը անկումների ազդարար է լոկ.  
Մահը սակայն Կապույտ երկրի մի բանբեր է, քո՛ւյր<sup>9</sup>...**

Այս գազելի վերջին տողում հայտնվող **«Կապույտ երկիրը»** նույն Ամենտին է, որտեղ հանգուցալուծվում է կյանքի և մահվան անհաշտությունը: Մահը հանդես է գալիս որպես դժգույն ու անիմաստ կյանքից ազատագրվելու միջոց, որպես երջանկության Ամենտի երկրի բանբեր և դեպի այն տանող առասպելական ճանապարհ: Այս հայեցողությանը շատ մոտ է «Տաղ անձնական» բանաստեղծության մեջ ընդգծված **«Գորշ, տաղտկալի ու խելագար երգ է կարծես այս կյանքը մի»** գաղափարը, որի հարաբերակցությամբ Ամենտի եզերքն ընկալվում է որպես երջանկության և ներդաշնակության աշխարհ:

Այսպիսով՝ Եղիշե Չարենցը 1916–1917 թթ. ունեցել է «Ամենտի» վերնագրով գիրք գրելու ցանկություն: Այն չի իրականացել, բայց բանաստեղծը այդ տարիներին գրած «Բանաստեղծություններ. Ծիածանը» գրքում և 1919 թ. գրած «Տաղ անձնական» բանաստեղծության մեջ

---

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 57:



մասամբ ուրվագծել է իր հղացումները: Բնական հարց է ծագում, թե գրական ինչ սկզբնաղբյուրից է տպավորվել Ե. Չարենցը, և ինչ ծագումնաբանություն ունի չարենցյան «Ամենտի եզերքը»: Մինչև այդ հարցին պատասխանելը անհրաժեշտ է կատարել բանասիրական մի կարևորագույն ճշտում:

Բանն այն է, որ, Ե. Չարենցի բուն բնագրերից բացի, «Ամենտի» բառը հանդիպում է նաև նրա առաջին գրքին վերաբերող մասնագիտական գրականության մեջ: Երկերի գիտական հրատարակության առաջին հատորի ծանոթագրություններում Ալմաստ Զաքարյանը «Երեք երգ տխրադալուկ աղջկան» գրքույկի մասին գրում է. «Բնաբանը՝ «Եվ այդ վերջին սերն էր վաղնջական գիշերվա»,– առնված է ֆրանսիացի սիմվոլիստ բանաստեղծ **Ալբեր Սամենի** (1858–1900) «Անավարտ պոեմներ» շարքի «Ամենտի» («Ame'thyste») բանաստեղծությունից»<sup>10</sup>:

Իրականում Ա. Սամենը չունի «Ամենտի» վերնագրով բանաստեղծություն: Ե. Չարենցի՝ որպես բնաբան օգտագործած «Et c'etait le dernier amour du soir antique...» տողով ավարտվում է ֆրանսիացի բանաստեղծի մի բանաստեղծություն, որ, ինչպես ճիշտ նշված է վերը բերված մեջբերման մեջ, վերնագրված է «Ame'thyste»: Դա «ամեթիստ» մանուշակագույն քարի անունն է, որի հայերեն տարբերակն է «մեղեսիկ»: Բայց, ինչպես հաճախ է լինում, սխալն անցել է գրքից գիրք, հողվածից հողված՝ տեղ գտնելով հայ գրականագետների թե՛ հայերեն, թե՛ ռուսալեզու աշխատանքներում: Մի կողմից՝ նրանք կրկնել են Ե. Չարենցի երկերի ժողովածուի ծանոթագրությունների մեջ սպրդած փաստական սխալը: Օրինակ՝ «Վ. Տերյանը և Ե. Չարենցը» աշխատության մեջ Վ. Պարտիզունին հղում է անում հիշյալ ծանոթագրությանը. «Ավել է, որ նա դեռ 1913 թ. Կարսում գրած «Երեք երգ տխրադալուկ աղջկան» շարքին բնաբան է դրել ֆրանսիացի սիմվոլիստ Ալբեր Սամենի «Ամենտի» բանաստեղծությունից»<sup>11</sup>:

Այս սխալը զարմանալիորեն շարունակում են կրկնել ամենից փորձառու և հմուտ չարենցագետները: Ա. Զաքարյանի՝ դիպված թվացող առաջին շփոթությունից մոտ տասը տարի անց այն կրկնում է նշանավոր չարենցագետ Սուրեն Աղաբաբյանը՝ գրողին նվիրված իր երկհատոր մենագրության առաջին հատորում գրելով. ««Երեք երգը...»

10 **Չարենց Ե.**, Երկերի ժողովածու վեց հատորով, հատ. 1, էջ 351:  
11 «Սովետական գրականություն», Եր., 1966, N 2, էջ 151:

ուներ «Ե՛վ այդ վերջին սերն էր վաղընջական գիշերվա» («Et c'était le dernier amour du soir antique») բնաբանը՝ քաղված ֆրանսիացի բանաստեղծ Ալբեր Սամենի «Անավարտ պոեմներ» շարքի «Ամենտի» բանաստեղծությունից»<sup>12</sup>: Ինչպես տեսնում ենք, գրականագետները աննշան տարբերություններով կրկնում են Ալմաստ Զաքարյանի մտքերը: Այդպես են վարվել նաև չարենցագիտության հետազա սերունդները: Բարեբախտաբար, օտար լեզուներ իմացող և համացանցի հնարավորություններն օգտագործող նորերը սկսել են արագ նկատել նման սխալները: Վերջերս լույս ընծայած իր նոր գրքում Ա. Սամենի վերնագրին և չարենցյան Ամենտիի՝ դրա հետ բնականաբար կապ չունենալու հարցին հատուկ անդրադարձել է Աշոտ Ալեքսանյանը<sup>13</sup>:

Մյուս կողմից՝ ֆրանսիացի բանաստեղծին «Ամենտի» վերնագիր վերագրած գրականագետներից ոմանք այդ կարծեցյալ իրողության մեջ ակնարկաբար տեսնում են չարենցյան «Ամենտի եզերքի» ակունքը՝ կարծելով, թե «Ամենտի» բառը Եղիշե Չարենցի բանաստեղծական բառարանում հայտնվել է հենց Ա. Սամենի շնորհիվ: Ցավոք, խորհրդային տարիներին և անկախության շրջանում նման համոզմունք է արտահայտվել նաև Երևանում և Մոսկվայում տպագրված ռուսերեն գրականագիտական աշխատանքներում: Մի քանի տարի առաջ հրապարակված մի հոդվածում Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող Բուրաստան Զուլումյանը, վերլուծելով կապույտ գույնը Ե. Չարենցի «Ծիածանը» գրքում, գրում է. «Այդ աշխարհին է պատկանում նաև ինքը՝ Ամենտի երկրի աստղային բանաստեղծը: Այդ անվանումը Չարենցը վերցրել է ֆրանսիացի սիմվոլիստ Ալբեր Սամենից, որն ունի «Ամենտի» վերնագրով բանաստեղծությունների շարք»<sup>14</sup>:

Նման սխալներն ու անհիմն պնդումները առավել ցավալի են նրանով, որ հնչում են ռուսական գրական միջավայրում, որտեղ շատ լավ գիտեն թե՛ Ա. Սամենի պոեզիան, թե՛ Ամենտի երկիրը: Ամեն պարագայում ակնհայտ է, որ Ամենտի եզերքը Եղիշե Չարենցի ստեղծագործության մեջ հայտնվել է ոչ թե 1913 թ. և Ալբեր Սամենի միջնորդությամբ, այլ 1916 թ.: Իսկ չարենցյան Ամենտիի ծագումնա-

12 Աղաբաբյան Ս. Բ., Եղիշե Չարենց, գիրք 1, Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1973, էջ 22:

13 Տե՛ս Ալեքսանյան Ա. Վ., Եղիշե Չարենցը և եվրոպական գրական ավանդույթը, Եր., «Անտարես», 2021, էջ 64-65:

14 Зулумян Б. С., От классической традиции к символизму: Туманян, Терьян, Чаренц (сравнительно-статистический анализ), «Studia Litterarum», М., 2019, N 4, с. 272.

բանությունը ճիշտ մեկնաբանելու համար պետք է դիմել ակունքներին:

Հասկանալի է, որ հին եգիպտական սկզբնաղբյուրները, ինչպես նաև նոր ժամանակների ռուս և եվրոպական գրականության համապատասխան երևույթները մեզ առավելապես հետաքրքրում են Եղիշե Չարենցի ուրվագծած «Ամենտի եզերքը» ճիշտ ըմբռնելու տեսանկյունից: Ուստի դրանց համառոտ վերլուծությունը կուղեկցվի Ե. Չարենցի ստեղծագործությանն առնչվող անհրաժեշտ զուգահրումներով:

## 2. Ամենտի եզերքը հին եգիպտական դիցաբանության և գրականության մեջ

1798-1801 թթ. տեղի ունեցավ Նապոլեոն Բոնապարտի եգիպտական արշավանքը, որից հետո աշխարհը սկսեց շատ մեծ հետաքրքրություն դրսևորել Հին Եգիպտոսի պատմության, կրոնի և մշակույթի նկատմամբ: 19-րդ դարի սկզբից եվրոպական, ռուս և ամերիկյան հնագետների ջանքերով ձևավորվեց հատուկ մի գիտակարգ՝ եգիպտագիտությունը, որն արդյունավետ աշխատանք է ծավալում մինչ օրս: Ի թիվս այլ հարցերի՝ դասական եգիպտագիտության ուշադրության կենտրոնում են Հին Եգիպտոսի աստվածները, Նեդոս գետի ափերին՝ այսպես կոչված «թագավորների հովտում» տեղակայված Թեբե հնագույն մայրաքաղաքի ավերակները, այնտեղ պահպանված բուրգերը, դամբարանները, սարկոֆագները, մումիաները: Եգիպտական քաղաքակրթության կարևորագույն դրսևորումներից են թաղման ծեսերը, հանդերձյալ աշխարհին և հոգու վերակենդանացմանը վերաբերող դիցաբանական պատկերացումները, որոնք արտահայտվել են պապիրուսների վրա, դագաղներին շարադրված գրություններում և գունավոր նկարներում՝ վիետականերում:

Դեռևս 19-րդ դարի կեսերին գիտությանը հայտնի դարձավ, որ հին եգիպտացիները ունեցել են անդրշիրիմյան կյանքը խորհրդանշող պայմանական աշխարհ, մեռյալների ստորգետնյա թագավորություն, որը կոչվել է Ամենտի: Վերջինիս վերլուծությունը տրված է մի շարք եգիպտագետների աշխատություններում, իսկ համառոտ

բնորոշումը՝ հանրագիտական բառարաններում: Արդեն 19-րդ դարի երկրորդ կեսին ռուս գիտնականները, գրողները և աստվածաբանները եվրոպացի եգիպտագետների միջոցով ծանոթ էին Հին Եգիպտոսի անդրշիրիմյան աշխարհի ուսմունքին: Գրող, Կազանի հոգևոր ակադեմիայի պրոֆեսոր Պյոտր Միլոսլավսկին այդ մասին խոսում է դեռևս 1874 թ. լույս ընծայած իր «Հին հեթանոսական ուսմունքը հոգիների թափառումների և վերաբնակեցման մասին» աշխատության մեջ:

1887 թ. ռուս վանական Միտրոֆանը (Վասիլի Ալեքսեն) հրատարակել է «Ինչպես են ապրում մեր հանգուցյալները, և ինչպես ենք ապրելու մենք մահվանից հետո» վերնագրով գիրք, որում, հետևելով Պ. Միլոսլավսկուն, Ամենտի աշխարհը բնորոշում է այսպես. «Ամենտին ստորգետնյա, երկնային տարածություն է երկրի և լուսնի միջև: Ամենտին արևի գիշերային ընթացքի կամ գիշերվա ժամանակ նրա հայտնվելու սրբազան, խորհրդավոր տարածքն է, որի մուտքի դուռը արևմուտքում է: Դա կյանքի տարածքն է. ամենտին այն տեղն է, ուր գնում են բոլոր հոգիները, և մահվան ու մեռյալների այդ թագավորության թագավորը Օսիրիսն է, որն ինքը ամեն օր մահանում է, որպեսզի հաղթի այն ուժին, որը թշնամի է կյանքին:

Ամենտին ներկայացնում է երկու բաժին՝ 1) կեր-նետեր՝ մահվան թագավորություն, դժոխք, տարտարոս, և 2) ասնրո՝ լույսի, կյանքի թագավորություն»<sup>15</sup>:

Հին եգիպտական դիցաբանության մեջ գոյություն է ունեցել թաղման հատուկ ծիսակարգ, որը կատարվել է մեռյալների Ամենտի թագավորության տարածքում: Մահվան աշխարհի գլխավոր աստվածությունը եղել է շան (կամ շնագայլի) գլխով Անուբիսը, որը ստորգետնյա սրահներում ուղեկցել է մեռյալին, կատարել նրա մարմնի զմռումը և անցկացրել նրա հոգու դատը: Բայց մեռյալների թագավորության՝ Ամենտիի ըմբռնումները հազարամյակների ընթացքում կրել են որոշ փոփոխություններ: Ավելի ուշ այդ աշխարհի գլխավոր աստված է դարձել եղբոր կողմից սպանված, բայց հետո վերակենդանացած Օսիրիսը, իսկ հանգուցյալների դատը կոչվել է

---

<sup>15</sup> Монах Митрофан, Как живут наши умершие и как будем жить и мы по смерти, т. II, С.-Петербург, издание Е. П. Литвиновой, 1887, с. 358.

«**Օսիրիսի դաս**»: Իհարկե, Անուբիսը շարունակել է վարել թաղման ծիսական արարողությունը, որի կենտրոնական դրվագը եղել է մահացածի արդար կամ անարդար լինելը ստուգելու նպատակով նրա սիրտը կշռելու ծեսը:

Մեռյալների թաղման դիցաբանական դիպաշարը և անդրշիրիմյան Ամենտի աշխարհի պատկերը տրված են Հին Եգիպտոսի առավել հայտնի և արժեքավոր մի ստեղծագործության մեջ, որը կոչվում է հենց «**Մեռյալների գիրք**»: Այն գրված է եղել պապիրուսների վրա, որոնք Հելիոպոլիսի, Մեմֆիսի և Թեբեի դամբարաններում հայտնաբերել և տանելով Եվրոպա՝ ուսումնասիրել են եվրոպացի հնագետները: Հին եգիպտացի քրմերի գրած ծիսական-մոգական բնագրերի այդ ժողովածուն «Մեռյալների գիրք» է վերնագրել գերմանացի եգիպտագետ Կարլ Լեփսիուսը, որը Թուրինի եգիպտական թանգարանում պահվող պապիրուսից գերմաներեն է թարգմանել այդ գիրքը և 1842 թ. տպագրել Լայպցիգում («Das Todtenbuch der Ägypter nach»): Դա հին եգիպտական «Մեռյալների գրքի» առաջին տպագիր հրատարակությունն է: Ավելի ուշ՝ 1882 թ., Լուվրի եգիպտական թանգարանի աշխատակից Պոլ Պիերեն Փարիզում հրատարակել է հին եգիպտական «Մեռյալների գրքի» ֆրանսերեն թարգմանությունը («Le livre des Morts»): Իսկ 1887 թ. լույս է տեսել մեկ այլ նշանավոր եգիպտագետի՝ Գաստոն Մասպերոյի ֆրանսերեն համանուն ուսումնասիրությունը:

«Մեռյալների գրքի» առավել ամբողջական տարբերակը՝ այսպես կոչված Անիի պապիրուսը, պահվում է Լոնդոնի բրիտանական թանգարանում: Այն բնօրինակից անգլերեն է թարգմանել և 1895 թ. հրատարակել անգլիացի նշանավոր եգիպտագետ Ուոլլիս Բաջը («Book of the Dead»): Նա գրել է նաև «Մեռյալների գրքին» և առհասարակ հին եգիպտական դիցաբանությանը վերաբերող բազմաթիվ ուսումնասիրություններ: Մեռյալների աշխարհին և նրա ծիսական արարողություններին վերաբերող հետազա բոլոր հետազոտությունները այս կամ այն կերպ բխում են նշված թարգմանություններից և հարակից աշխատություններից:

Ամենտի աշխարհի հակիրճ և ինքնատիպ բնորոշումը տրված է Բրոքհաուզի և Եֆրոնի հանրագիտական բառարանի առաջին հատորի երկրորդ գրքում, որը տպագրվել է հենց «Մեռյալների գրքի» ուսումնասիրման բուռն շրջանում՝ 1890 թվականին: Ահա այդ բառա-

հողվածը ամբողջությամբ. **«Ամենտես»** (ըստ հիերոգլիֆների՝ Ամենտի) – անվանում, որ հին եգիպտացիները տալիս էին ստորգետնյա աշխարհին, Աիդին հույների, որոնք մեռյալների այդ աշխարհ մտնելու և այնտեղ մնալու մասին իրենց պատկերացումները փոխառել են գլխավորապես եգիպտացիներից: Ջրի վրայով տեղաշարժվելը, երանության կղզիները, Կերբերոսը, մահացածների դատավարությունը, ինչպես և շատ ուրիշ բաներ իրենց նախատիպն ունեն Ամենտիում, որի տիրույթները՝ իրենց պատկանող աստվածներով հանդերձ, առավելապես նկարագրված են եգիպտական «Մեռյալների գրքում» և պատկերված են վինետկանների վրա: Գլխավոր տեսարանը պատկերում է մեռյալների դատավոր Օսիրիսի դահլիճը, որի առջև հանգուցյալին բերում է Մա աստվածուհին (Արդարություն), միևնույն ժամանակ Հորուսը և Անուբիսը կշռում են նրա գործերը»<sup>16</sup>:

Ամենտի և Աիդ եգերքների նմանությունը վկայում է մարդկային քաղաքակրթության հետագա ընթացքի վրա հին եգիպտական մշակույթի թողած զգալի ազդեցության մասին: Բայց ոչ միայն: Ինքը՝ Եղիշե Չարենցը, գիտելիքներով և բանաստեղծական ինտուիցիայով զգացել է այդ հարազատությունը: Նույն՝ 1916 թ., այսինքն՝ «Ամենտի եգերքի» հղացման օրերին, նա գրել է նաև «Եգերքը Աիդ» լիրիկական բալլադը: Եվ եթե հիշենք, որ նա նույն թվականին է կատարել նաև քրիստոնեական դժոխքի առաջին բանաստեղծականացումը («Դանթեական առասպել»), պարզ կդառնա, որ **նույն՝ 1916 թվականին Ե. Չարենցը միաժամանակ պատկերել է հին ժամանակների երեք ստորգետնյա անդրաշխարհները՝ Ամենտի, Աիդ և դժոխք**<sup>17</sup>:

Արդեն նշվեց, որ Ամենտի աշխարհը, Անուբիսի ուղեկցությամբ հանգուցյալների ընթացքը մահվան այդ թագավորության մեջ և Օսիրիսի դատը առավել տպավորիչ և ամբողջական պատկերված են «Մեռյալների գրքի» 125-րդ գլխում: Այն, ինչպես և ամբողջ գիրքը, հին եգիպտական դիցաբանության և միաժամանակ պոեզիայի բարձրագույն դրսևորումներից է: Ու. Բաջը ներկայացնում է 125-րդ գլխի հետևյալ երկար վերնագիրը և կից գեղանկարի նկարագրու-

16 Брокгауз Ф. А., Ефрон И. А., Энциклопедический словарь, т. 1А (2), Санкт-Петербург, Семеновская Типо Литография (И. А. Ефрона), 1890, с. 151-152.

17 Մասնագետների վկայությամբ՝ Աստվածաշնչի դպտերեն թարգմանության մեջ «դժոխք» բառի փոխարեն օգտագործված է «Ամենտի» բառը:

թյունը. «Այն բառերը, որոնք պետք է արտաբերի հանգուցյալը Մաաթի Դահլիճ (Երկու Ճշմարտությունների Դահլիճ) մտնելիս, որոնք (այսինքն՝ բառերը) կանջատեն նրան մեղքերից և թույլ կտան նրան տեսնել Աստծուն՝ մարդկանց տիրակալին: Վինետկա. Մաաթի Դահլիճը, որտեղ մեծ աստվածների ներկայությամբ կատարվում է մահացածի սրտի կշռումը»<sup>18</sup>:

«Մեռյալների գիրքը» ամփոփում է հին եգիպտացիների հավատալիքը հավերժական կյանքի և հոգու անմահության մասին: Մինչև մահը նա պետք է լավ ծանոթ լիներ այդ գրքին և պատրաստ լիներ հանդերձյալ աշխարհում իրեն վերապահված հետմահու կյանքին: Եգիպտացիները համոզված էին, որ երկրային կյանքը ձիշտ ապրելու դեպքում իրենց գոյությունը ֆիզիկական մահվամբ չի ավարտվի:

Ամենտիի դահլիճներում հանգուցյալին դիմավորում և ուղեկցում էր Անուբիսը: Նա զմռսում էր մեռյալի մարմինը, իսկ հոգու հետագա ճակատագիրը պարզելու համար կատարվում էր մահացածի դատը: Ժամանակին մահացած և վերակենդանացած Օսիրիսը, որ արդեն հանդերձյալ թագավորության աստվածն էր, նստած էր գահին (հանգուցյալին հաճախ պայմանականորեն կոչում էին հենց Օսիրիս): Անուբիսը և արևի աստված, Օսիրիսի և Իսիդայի որդի Հորուսը մեծ կշեռքով կշռում էին մեռյալի սիրտը (**էք** կամ **աբ**): Այն դրված էր կշեռքի մի նժարին, իսկ մյուսին դրված էր արդարության և ձշմարտության աստվածուհի Մաաթի փետուրը: Եթե նժարները տատանվում էին, հատկապես եթե թեթև փետուրը ավելի ծանր էր կշռում, ուրեմն հանգուցյալը անարդար էր: Այդ դեպքում նրա սիրտը խժռում էր վայրի կենդանիների նմանվող Ամաթ հրեշը, և հանգուցյալի մարմինը թաղվում էր:

Սրտի կշռման ընթացքում մեռյալը արտասանում էր իր «հերքման խոստովանությունը»: Նա հականե-հանվանե դիմում էր եգիպտական քառասուներկու աստվածներին և Ժխտական բայաձևերով փորձում էր հանոզել, որ ինքը կյանքում վատ բան չի արել: Այս արարողությունը և մասնավորապես «հանգուցյալի պաշտպանական խոսքը» արտացոլվել են հենց «Մեռյալների գրքի» 125-րդ

18 Египетская Книга мертвых. Папирус Ани Британского музея. Перевод, введение и комментарии Э. А. Уоллеса Баджа / Пер. с англ. С. В. Архиповой, М., «Алетей», 2003, с. 36.

գլխում: Ահա տողեր այդ խոստովանությունից՝ Հենրիկ Էդոյանի թարգմանությամբ.

**Ես մարդկանց չարիք չեմ պատճառել...**

**Ես թույլի վրա ձեռք չեմ բարձրացրել...**

**Ես հիվանդության պատճառ չեմ դարձել...**

**Ես արցունքների պատճառ չեմ դարձել...**

**Ես չեմ սպանել...**

**Ես չեմ գազրախոսել...**

**Ես չեմ խլել կաթը երեխաների բերանից...**

**Ես չեմ հանգցրել զոհաբերության կրակը նրա վառման պահին...**

**Ես չեմ խրտնացրել նախիրը աստծու կալվածքներում:**

**Ես աստծու դուրս գալուն արգելքներ չեմ դրել:**

**Ես մաքուր եմ, ես մաքուր եմ, ես մաքուր եմ, ես մաքուր եմ<sup>19</sup>:**

Մեռյալի խոստովանական խոսքը արտասանվում էր նրա սրտի կշռմանը համընթաց: Այդ ժամանակ Անուբիսը նրան զգուշացնում էր. «Ո՛վ դու, որ բերում ես ինձ ճշմարտության կամ ստի բառերը, [հիշի՛ր], որ Թոթը կշռում է դրանք»<sup>20</sup>: Եթե կշեռքի նժարները կանգնում էին հավասար, ապա դատավճիռը գրող Թոթ աստվածը գրում էր, որ հանգուցյալը արդար է: Այդ դեպքում նրա հոգին դառնում էր անմահ, և մեռյալը արժանանում էր հավերժական կյանքի: «Մեռյալների գրքի» հաջորդ՝ 126-րդ գլխում Օսիրիսը արդար ճանաչված հանգուցյալին ասում է. «Անցի՛ր Ամենտիի խորհրդավոր սյուների միջով, դո՛ւրս եկ և մտի՛ր քո ցանկությանը, ինչպես մյուս հոգիները»<sup>21</sup>: Եվ մարդը մտնում է, այսինքն՝ հարություն է առնում:

Ստորգետնյա թագավորության հովանավոր Ամենտետ աստվածուհին մեռյալի հոգին նավակով տեղափոխում էր Ամենտի աշխարհի արևմտյան երանավետ հատվածը, որտեղ նա ապրում էր **Իալու** (կամ **Իարու**) դաշտերում՝ ծաղիկների ու փարթամ ծառատանների մեջ, լողանում վճիտ ջրերում: «Եղեգների հովիտ» կոչվող

19 Հին Արևելքի պոեզիա, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1982, էջ 7-8:

20 Бадж У., Боги египтян. Царство света, или Тайны загробного мира, М., ЗАО «Центрполиграф», 2014, с. 207.

21 Le Livre des morts des anciens Égyptiens: traduction complète d'après le papyrus de Turin et les manuscrits du Louvre, par Paul Pierret, Paris, Librairie de la société asiatique de Paris, 1882, p. 390.



այդ դաշտերը նախօրինակներն են հունական դիցաբանության Ելիսեյան դաշտերի: Փաստորեն, Ամենտի տեղափոխվում էր մեռյալի հոգին կամ կրկնորդը, իսկ զմռսված մարմինը մնում էր դամբարանում՝ գերեզմանի մեջ:

Թաղման այս կրոնական ծեսը, որը հարյուրավոր վերաշարադրանքներով հայտնվել է եգիպտագիտական տարալեզու ուսումնասիրություններում, հանրագիտարաններում և հանրամատչելի գրքերում ու հոդվածներում, ընդհանուր առմամբ արտացոլվել է «Ամենտի» գրքից պահպանված չարենցյան առաջին բանաստեղծության մեջ.

**Հոգին չի մեռնում: Մարմինը թողած երկրային փոսում –  
Թափառում է նա Տիեզերական Լաբիրինթոսում:  
Անցնում է բոլոր ճամփաները սուտ ու անբեր երկրի,–  
Որ պայծառ, մաքուր դարձերից հետո,– Քո գրկում բերկրի:  
Բայց ե՛րբ կհասնի հոգիս, որպես սեզ, սրբացած մի զոհ,–  
Մայրամուտային եզերքը Կապույտ,– լույս եզերքը Քո<sup>22</sup>...**

Որ «երկրային փոսը» գերեզմանն է, դամբարանը, ինքնին պարզ է բնագրից: Մտքեր է հարուցում երկրորդ տողի «լաբիրինթոսը», այն էլ՝ «Տիեզերական» (առաջին հրատարակության մեջ՝ դարձյալ մեծատառված «երկրադարձային») մակդիրով և իբրև հոգու թափառումների վայր: Լաբիրինթոսը իր բուն բառիմաստով և իբրև խորհրդանիշ կա բազմաթիվ ժողովուրդների հնագույն պատմության և դիցաբանության մեջ: Բայց ցնցողն այն է, որ մասնագետները, Հին Եգիպտոսի բուրգերում կառուցված իրական հսկա լաբիրինթոսներից բացի, խոսում են նաև լաբիրինթոս սիմվոլի մասին՝ այն կապելով անդրշիրիմյան Ամենտի աշխարհի հետ: Մասնավորապես այդ կարծիքին է մեծ աստվածաբան և փիլիսոփա Ելենա Բլավատսկայան, որը դեռևս 1892 թ. Լոնդոնում տպագրված իր «Աստվածաբանական բառարանում» գրել է. «Եգիպտոսն ուներ «երկնային լաբիրինթոս», որի մեջ սուզվում էին մեռյալների հոգիները, ինչպես նաև նրա ներկայացուցիչը երկրի վրա՝ ստորերկրյա դահլիճների և միջանցքների շարքը՝ ամենաանսպասելի շրջադար-

22 Չարենց Ե., Երկերի ժողովածու, հատ. 1, էջ 82:

ձերով»<sup>23</sup>: Հիշելով, որ բանաստեղծը «Ծիածանի» հենց առաջին բանաստեղծության մեջ օգտագործել է «**Լաբիրինթում քո Կապույտ**», իսկ «Կապույտը» շարքի առաջին բանաստեղծության մեջ՝ «**Հոգիս – Կապույտի լաբիրինթոսում**» պատկերները, կարելի է մտածել, որ ոչ առանց ինչ-որ աղբյուրի ազդեցության է. Չարենցը նույնացնում է «Ամենտի» և «լաբիրինթոս» հասկացությունները:

Ջարմանալիորեն շատ ավելի միանշանակ ձևով այդ կարծիքն է հայտնում նաև ժամանակակից անգլիացի արձակագիր Ֆիլիպ Գարդիները. «Հին Եգիպտոսում լաբիրինթոսը հոմանիշ էր այն բանին, որ կոչվում էր Ամենտի՝ օձանման ուղի... Հենց Իսիդան էր՝ դրախտի օձանման թագուհին, որ պետք է առաջնորդեր հոգիներին Ամենտիի ոլորանների միջով»<sup>24</sup>:

Վերը ամբողջովին մեջբերված բանաստեղծության վերջին տողում առկա է «**Մայրամուտային եզերքը Կապույտ**» բառակապակցությունը: «**Մայրամուտային եզերքը**», ինչպես գիտենք է. Չարենցի «Ծիածանը» գրքի մեկ այլ բանաստեղծության հեղինակային ծանոթագրությունից, հենց Ամենտի եզերքն է: Իսկ որ այն կապույտ է, փոքր-ինչ անակնկալ է թվում այն պատճառով, որ դա անդրշիրիմյան աշխարհն է, որ գետնի տակ է: Բայց չնոռանանք, որ մի կողմից գործ ունենք ոչ իրական, այլ պայմանական դիցաբանական պատկերացումների, մյուս կողմից՝ խորհրդապաշտության պոեզիայի հետ, որ ոչ պակաս երևակայական է: «Ծիածանի» մեկ ուրիշ բանաստեղծության մեջ, ինչպես հիշում ենք, «կապույտը» ուղղակի դրված է որպես Ամենտի եզերքի մակդիր («**Դեպի Ամենտի եզերքը կապույտ**»):

Որ չարենցյան Ամենտին կապույտ է, սերտորեն հարաբերակցվում է «Ծիածանը» խիստ ինքնատիպ գրքի հղացմանը և կառուցվածքին: Առնչվելով երկնքի, ինչպես նաև աստղերի հետ՝ չարենցյան Ամենտի երկիրը ունի միանշանակ գունային բովանդակություն: Ամենայն հավանականությամբ, Ամենտի եզերքի գույնն է թելադրել կապույտի գեղարվեստական վճռորոշ դերակատարությունը չարենցյան «երեքգույն ծիածանի» մեջ: Ըստ մասնագետների՝ Հին Եգիպտոս-

23 Блаватская Е. П., Теософский словарь. Изд. 2-е, исправленное, М., Изд. «Сфера» Российского Теософского Общества, 1994, с. 212.

24 Gardiner Ph., Secrets of the Serpent, in Search of the Sacred Past special revised edition featuring two new appendices, London, "Reality Press", 2008, p. 40.

սում խորհրդանշական արժեք ունեին մի քանի գույներ, բայց հատկապես այն երկուսը, որ առանցքային դեր ունեն է. Չարենցի «Ծիածանում»՝ կապույտը և ոսկեգույնը (մանուշակագույնի խնդիրն առանձնահատուկ է, թեև այլևայլ առնչությունների հետ միասին գեղարվեստական ինչ-որ եզրով կապված է նաև հին եգիպտացիների գունային փիլիսոփայության հետ): Ընդհանուր մշակութաբանական համատեքստի առումով հետաքրքրական է, որ 20-րդ դարի սկզբին իր գունային մտածողությունը Հին Եգիպտոսի հետ էր կապում նաև **Մարտիրոս Սարյանը**:

Շատ լավ իմանալով, որ բառացի «արևմուտք» իմաստն ունեցող Ամենտին դիցաբանական բովանդակությամբ նշանակում է «անդրշիրիանյան, հետմահու աշխարհ», Եղիշե Չարենցը և՛ «Ծիածանը» գրքում, և՛ «Տաղ անձնական» բանաստեղծության մեջ Ամենտի գեղարվեստական աշխարհը տեղակայում է երկնքում: Այս միտումը ցայտուն արտահայտված է **«Երկնքից-երկինք, իրիկվա մովում»** և **«Դեպի երկի՛նք պիտի գնամ, դեպի եզերքը Ամենտի»** տողերում: Այս իրողությունը կապված է «Ամենտի» հասկացության պատմական զարգացման և իմաստափոխության հետ: Հին թագավորության շրջանում Ամենտի աշխարհը կոչվել է **Դուատ** և միանշանակ գտնվել է երկնքում: «Մեռյալների գրքի» տեղանվանաբանության մեջ «Դուատ» բառը հաճախականությամբ չի զիջում «Ամենտի» բառին, թեև Դուատի մասին ավելի շատ խոսվում է հին եգիպտական երեք ուրիշ գրքերում՝ «Ամդուատ», «Դարպասների գիրք» և «Քարանձավների գիրք»:

Հենվելով նշված գրքերի հաղորդած տվյալների վրա՝ ժամանակակից ռուս եգիպտագետ Իվան Ռակը եգիպտական դիցաբանությանը նվիրված մի մենագրության մեջ ներկայացնում է, թե ինչ վիճակի մեջ են ընկնում այն մեռյալները, որոնց հոգին չի հայտնվում Ամենտիի կամ Դուատի երանելի մասերում: Նրանք ապրում են մշտական խավարի մեջ, կապկպված են և բանտարկված, այրվելով տանջվում են: Նրանք քաղցած ու ծարավ են, խոր փոսի մեջ են ու չեն հասնում ուտելիքին և ջրին, որ դրված են փոսի վերևում: Այս վիճակում են հայտնվում նրանք, ովքեր մեղավոր են ձանաչվել Օսիրիսի դատավարության ժամանակ: «Գահի կողքին,– գրում է Ի. Ռակը,– Ճշմարտության Կշեռքի մոտ կանգնում էին Անուբիսն ու Թո-

թը: Նրանք կշռում էին մարդկանց գործած բարին և չարը: Անուբխար հայտարարում էր աստվածների դատավճիռը, և Թոթը գրառում էր այն: Եթե հանգուցյալի չարագործությունները գերազանցում էին նրա բարի գործերը, նրանք նրա սիրտը հանձնում էին հրեշավոր Ամաթին, իսկ եթե գերակշռում էր բարին, ապա հանգուցյալը ուղևորվում էր երկինք և այնտեղ ապրում արդարների հետ»<sup>25</sup>:

Մինչդիհնաստիական շրջանի հավատալիքների համաձայն՝ մաքուր հանգուցյալների հոգիները բնակվում էին աստղերի մեջ: Դուատը (կամ Ամենտին) գտնվում էր երկնքի արևելյան մասում: Ահա թե ինչու է Եղիշե Չարենցի հոգին գնում «դեպի երկինք», «դեպի եզերքը Ամենտի» և ձգտում հասնելու այնտեղ իր «աստղային երազների ճանապարհով»:

«**Աստղայինը**»՝ որպես Ամենտի եզերքի բնութագրական բաղադրիչ, առկա է «Ծիածանը» ժողովածուի հենց առաջին էջերում: Գրքի ինքնաբնաբան-ընծայականն է «**Դու իմ վերջին, իրիկնային, աստղային քույր**», իսկ առաջին բանաստեղծությունը զուգորդում է աստղային բանաստեղծին և սիրած էակի կապույտ լաբիրինթոսը:

**Ես աստղային մի պոետ, Լաբիրինթում քո Կապույտ,  
Քո՛ւյր, անցնում եմ, որպես աստղ, հոգիս – մեռած աստղի փայլ**<sup>26</sup> ...

Փաստորեն, Ե. Չարենցը Ամենտի եզերքի ստեղծման շրջանում «աստղային» բառը քանիցս դարձրել է մակդիր՝ մեկ սիրած աղջկա («**աստղային քույր**»), մեկ իր՝ բանաստեղծի («**աստղային պոետ**»), մեկ Ամենտի երկրի երազների («**աստղային երազներ**») համար: «Ծիածանի» հետագա գործերում ևս այդ մակդիրը ունի շատ հաճախակի և անսպասելի կիրառություններ՝ «**աստղային նիրհից**», «**աստղային հոգին**», «**աստղային եղբայր**»: Ուշագրավ է նաև, որ Հին Եգիպտոսում Դուատի հիերոգլիֆը կլոր շրջանակի մեջ պատկերված աստղ էր:

Այսպիսով՝ թեև Ե. Չարենցը երբևէ չի օգտագործել «Դուատ» բառը (այն առանձնապես չեն օգտագործել նաև հայ բանաստեղծի տեսադաշտում գտնվող ռուս և եվրոպացի հեղինակները), Դուատը իր

<sup>25</sup> Рак И. В., Мифы Древнего Египта, Екатеринбург, «У-Фактория», 2007, с. 264.

<sup>26</sup> Չարենց Ե., Բանաստեղծություններ. Ծիածանը, էջ 7:

էական կողմերով առկա է Ամենտի երկրի նրա փիլիսոփայության և գեղարվեստական համակարգի մեջ:

Այսպես կոչված Օսիրիսի դատի առանցքային դրվագներից մեկի՝ մեռյալի սիրտը կշռելու արարողության գոնե հեռավոր բանաստեղծական արձագանքը կարելի է համարել սրտի պատկերը Եղիշե Չարենցի «Տաղ անձնական» բանաստեղծության վերջին տան մեջ.

**Ու էլ ամե՛ն մեղքի համար սիրտս հիմա ունի ներում.**

**Պիտի անդարձ ես հեռանամ, պիտի գնամ՝ ա՛չքս է հեռուն<sup>27</sup>...**

Նկատի ունենալով «սիրտ» բառապատկերի ընդգծված մեծ հաճախականությունը Ե. Չարենցի ստեղծագործության մեջ՝ կարելի էր նաև շրջանցել այս հատվածի առաջին տողի ոչ այնքան հասկանալի իմաստը: Կարելի էր նաև «**Ու էլ ամե՛ն մեղքի համար սիրտս հիմա ունի ներում**» բանաստեղծական մտքին տալ ավանդական բացատրություն և այն կապել հայրենի տունն ու քաղաքը լքելու, սիրած էակին հրաժեշտ տված չլինելու և բանաստեղծության մեջ հիշատակված այլ մոտիվների հետ: Բայց չնոռանանք, որ այդ միտքը անմիջապես հաջորդում է դեպի Ամենտի գնալու հայտարարությանը և նախորդում անդարձ հեռանալու, աչքը հեռուներին հառած՝ գնալու մտքին: Բանաստեղծը անկասկած հիշում է, որ Ամենտի եզերքում կարող է հայտնվել միայն մեղքերից զերծ սրտով, ուստի մտածում է, որ իր մեղքերն այնքան էլ շատ ու ծանր չեն և կարժանանան աստվածների ներողամտությանը: Սրտի ու մեղքերի վրա այդպես կենտրոնանալու հանգամանքը հասկանալու համար հիշենք նաև, որ Ամենտի եզերքի պատկերին նախորդող բանաստեղծական տան մեջ Ե. Չարենցը ևս երկու անգամ անդրադառնում է ծանրացած սրտին («**Ինչ-որ մեկի սրտում բացված- վերք է կարծես այս կյանքը մի**», «**Սիրտս՝ լցված տարիների սեղմ արձիճով ու կապարով**»): Ընդ որում, սրտի քննությունը հին եգիպտական պոեզիայում առհասարակ սիրված մոտիվ է և առկա է ոչ միայն «Մեռյալների գրքում», այլև, օրինակ, «Հիասթափվածի վեճը իր հոգու (Բա) հետ» հանրահայտ բանաստեղծության մեջ:

27 **Չարենց Ե.**, Երկերի ժողովածու վեց հատորով, հատ. 1, էջ 298:

Հին եգիպտական դիցաբանությունը և գրականությունը վիթխարի ազդեցություն են թողել համաշխարհային գեղարվեստական մտքի վրա: Դրա մասնակի դրսևորումներից մեկն էլ սիրած էակին քույր (կամ եղբայր) համարելու միտումն է: Եգիպտական սիրային քնարերգության մեջ տղան հաճախ է սիրած աղջկան բնորոշում **«քույր»**, իսկ աղջիկը սիրած տղային՝ **«եղբայր»** բառով: «Գեղեցիկ և ուրախ երգերը քրոջ, երբ նա վերադառնում է մարգագետիններին» բանաստեղծությունը սկսվում է **«Օ, իմ եղբայր»** բառերով: Առավել հաճախակի է «քույր» բառի գործածությունը (**«Ես շփոթվում եմ ջրի հմայքից, // կարծես իմ քրոջ շուրթերը լինեն»**, **«Ահա քրոջս տունը քաղաքի ծայրամասում»**, **«Այն մյուս ափին է քույրը»**, **«Ինձ մեծ բախտ հասավ, // Քույրս եկավ իմ տուն»**): Սիրեցյալին յոթ օր չտեսած հիվանդ տղան ասում է.

**Շնչացեք ինձ Քրոջս անունը,  
և ես վեր կելնեմ անկողնուց,  
թե գար նրանից սուրհանդակ,  
սիրտս կյանք կառնեմ**<sup>28</sup>:

Մեջբերելով նման հատվածներից մեկը՝ Մ. Մատյոն գրում է. «Հին Եգիպտոսում «քույր» բառը նշանակում էր նաև «սիրուհի», իսկ «եղբայր» բառը՝ «սիրեցյալ». «քույր»-ը և «եղբայր»-ը եգիպտական սիրային պոեզիայում սիրահարների սովորական բնորոշումներ են»<sup>29</sup>: Մ. Մատյոն և ուրիշ եգիպտագետներ այս երևույթի մեջ տեսնում են դիցաբանական արմատներ՝ «քույր» և «եղբայր» հասկացությունների նման իմաստափոխությունը կապելով Թեֆնուպ աստվածուհու և նրա եղբայր ու ամուսին Շուի պաշտամունքի հետ: Սակայն և՛ միֆը, և՛ գրականության մեջ նրա տարրերի ներթափանցումը ունեն այն իրական հիմքը, որ Հին Եգիպտոսում բավական տարածված էին հարագատ քույրերի և եղբայրների ամուսնությունները: Ամեն պարագայում սիրած էակին «քույր» անվանելը հոգեբանական ջերմություն, մտերմության և քնքշանքի մթնոլորտ է ստեղծում հին եգիպտական բնագրերում, հատկապես սիրային քնարերգության մեջ:

28 Հին Արևելքի պոեզիա, էջ 57:

29 Матъе М. Э., указ. соч., с. 49.

Եղիշե Չարենցի՝ վաղ շրջանի բանաստեղծական բառարանում ամենից հաճախադեպ և տպավորիչ բառերից մեկը «քույր»-ն է: Նախնական տպավորությամբ՝ այն առանձնապես շատ է գործածված «Ամենտի եզերքի» հայտնության շրջանում: Համեմատության համար նկատենք, որ այդ բառն իսպառ բացակայում է «Երեք երգ տխրադալուկ աղջկան» գրքույկում և 1910-ական թթ. կեսերին գրված շարքերի մեծ մասում: Նկատելով, որ Չարենցը բառի պատմողական-նկարագրական կիրառությունից ավելի գերադասում է «քույր» դիմելաձևը՝ տեսնում ենք, որ այն առանձին կիրառություններ ունի «Հրո երկիր» շարքում, որը բանաստեղծը սկսել է 1913 թ. և ավարտել Մոսկվայում 1916 թ. (սա Ամենտիի հղացման ժամանակն է): Ընդհատ է, այդ շարքում բառօգտագործումը դրվագային է, բայց նաև շատ հետաքրքրական («Քո՛ւյր, գուցե՛ չըկանք... // Գուցե մեկը, - ո՛վ - // Երազել է մեզ // Անլույս գիշերով...»):

«Քույր» բառապատկերը տարբեր բառաձևերով, բայց առավելապես որպես կոչական տասնյակ կիրառություններ ունի «Ծիածանը» գրքում («Քո՛ւյր, կապել են քո աչքերում, իմ հոգում - // Ծիածան», «Դու մոտեցար որպես քույր - ու հեռանում ես սհա», «Կապույտը հոգու աղոթանքն է, քույր», «կապո՛ւյտ աղջիկ, քո՛ւյր իմ հեզ, դու հետ չե՛ս գալու», «Քո՛ւյր, զանգերի տխրության մի դողանջ է քո հոգին»...): Առանձին տպավորիչ գործածություններ կան մեկ էլ նույն շրջանում՝ 1916-1917 թթ. գրած մի քանի գործերում՝ «Հարդագողի ճամփորդները» («Քույրը խնդաց, բարեկամը ծիծաղեց»), «Հեռացումի խոսքեր» («Մոտենում է, քո՛ւյր իմ, ա՛խ, իրիկունս միգամած», «Ի՛նչ էլ լինի, քո՛ւյր իմ, քո՛ւյր, հեռանալիս չանիծե՛ս») և այլն: Դրանից հետո «քույր» բառը սկսում է անհետանալ Ե. Չարենցի բառապաշարից: Այն չկա նույնիսկ 1919 թ. գրած «Տաղ անձնական» բանաստեղծության մեջ, որի գեղարվեստական երկու հենասյուները՝ Կարինե Քոթանձյանը և Ամենտի աշխարհը, գրեթե նույնական են «Ծիածանի» հետ: Գեղարվեստորեն խիստ արդյունավետ այս հնարանքը, հետագայում դուրս գալով Ե. Չարենցի սիրերգությունից, շատ տպավորիչ և բազմակի կիրառություն ունի մեկ էլ նրա «Սոմա» պոեմում: Սա շատ զարմանալի և առանձին մեկնաբանության կարոտ իրողություն է, քանի որ որևէ հիմնավորում չունի պոեմի

սկզբնաղբյուրներում՝ հին հնդկական դիցաբանության մեջ և «Ռիգ-վեդա» պոեմում:

Ճիշտ հակառակ պատկերն է «Ծիածանում» և նշված մյուս գործերում տեղ գտած «քույր» բառապատկերի պարագայում: Քույրը՝ որպես սիրած աղջկա և կնոջ բնութագրիչ, հստակ արտահայտված է հին եգիպտական ոչ միայն սիրերգերում, այլև դիցաբանական պատումներում: Այն, որ Ե. Չարենցը Ամենտի եգերքի սեփական ըմբռնումը միանշանակ կապում է սիրելի աղջկա՝ Կարինե Քոթանձյանի հետ և բացարձակի հասցնում «քույր» հասկացության արժեքը, դարձյալ հեռավոր և թաքնված արմատներ ունի Ամենտի անդրշիրիմյան աշխարհի հին եգիպտական դիցաբանական պատկերացման մեջ: Եգիպտագետները համոզված են, որ Ամենտի եգերքը ծագել է հին եգիպտացիների մեծագույն աստվածներից մեկի՝ **Օսիրիսի միֆից**: Վերածնության աստված, անդրշիրիմյան աշխարհի տիրակալ, հանգուցյալների հոգիների դատավոր Օսիրիսը, ըստ եգիպտացիների հավատալիքների, առաջինն էր, որ մահացել է և ապա հարություն առել: Իսկ մեռյալներին Ամենտի աշխարհի սրահներում ուղեկցող շան գլխով Անուբիսը, համաձայն հին եգիպտական առասպելաբանության, Օսիրիս աստծու որդին էր (Անուբիսը անվան հունական տարբերակն է. եգիպտացիները նրան կոչում էին Ինպու):

Օսիրիսի միֆը սփռված է եգիպտական տասնյակ սկզբնաղբյուրներում: Համահավաք ձևով այն շարադրել է Պլուտարքոսը «Իսիդայի և Օսիրիսի մասին» տրակտատում, որում, ի դեպ, տվել է նաև Ամենտի աշխարհի իր մեկնաբանությունը: Խոսելով եգիպտացիների օգտագործած անվանումների մասին՝ նա գրում է. «Ստորգետնյա աշխարհը, ուր, նրանց կարծիքով, մահվանից հետո ուղևորվում են հոգիները, նրանք անվանում են «Ամենտ», իսկ այդ անունը նշանակում է «վերցնող և տվող»»<sup>30</sup>:

Ըստ Օսիրիսի առասպելի՝ նրան սպանել է եղբայրը՝ Սեթը, մարմինը բաժանել տասնչորս մասերի և ցրել դրանք Եգիպտոսի տարբեր շրջաններում: Օսիրիսի քույրը՝ **Իսիդան** (Իսիս, Իզիդա), որը միաժամանակ նրա կինն էր, երկար որոնումներից հետո գտնում է ամուսնու մարմինը: Ռա աստվածը ուղարկում է շնագայլի գլխով Անուբիս աստծուն, որը հավաքում է մարմնի հատվածները, զմռում

30 Плутарх, Исида и Осирис, М., «Эксмо», 2006, с. 37-38.



դրանք և թաղում: Իսիդան վերականգնում է Օսիրիսի մարմնում ամփոփված կենսական ուժը, որից էլ հղիանում է: Ամուսնու թաղումից հետո Իսիդան ծնում է Հորուսին, որը մեծանալով սպանում է իր հորեղբորը՝ լուծելով հոր վրեժը: Դրանից հետո Օսիրիսը վերակենդանանում է: Նա հրաժարվում է գահից՝ հոգուտ որդու, տեղափոխվում անդրշիրիմյան աշխարհ՝ Ամենտի, և դառնում մեռյալների թագավորության տիրակալ<sup>31</sup>:

Դիցաբանական այս պատումից ակնհայտ է դառնում, որ Ամենտի աշխարհը՝ որպես հոգու հարության և անմահության խորհրդանիշ, ծնվել է սիրուց: Իսիդայի սերը, որի շնորհիվ գտնվում և վերակենդանանում է Օսիրիսի մարմինը, որից զավակ է ծնվում, հենց կենսական այն ուժն է, որի շնորհիվ հնարավոր է դառնում հավերժական կյանքը: Եղիշե Չարենցի պատկերացմամբ՝ իրեն այդպիսի ուժ էր տալիս Կարինե Քոթանձյանի սերը: **Եվ ինչպես Իսիդան Օսիրիսի քույրն էր, այդպես էլ Չարենցի համար քույր է դառնում իր սիրելի էակը՝ Կարինե Քոթանձյանը:** Ահա թե որտեղ է սիրելիին «քույր» կոչելու չարենցյան հզոր մղումի ծագումնաբանությունը:

Այս վարկածը հիմնավորելու համար անենք գրապատմական ևս երկու կարևոր դիտարկում: Օսիրիսի միջի սկզբնաղբյուրների մեջ եզրպատագետները նշում են նաև երկու չափածո ողբեր: Օսիրիսի մահը սգացող Իսիդան ողբում էր իր քրոջ՝ Նևթիդայի հետ, ուստի ողբերից մեկը կոչվում է «Իսիդայի և Նևթիդայի ողբը»: Երկրորդը վերնագրված է «Իսիդայի ողբը Օսիրիսի մահվան առթիվ»: Ահա այդ բանաստեղծության մեջ Իսիդան իրեն անվանում է սիրեցյալի միաժամանակ կին և քույր.

**Ես կին եմ, գեղեցիկ՝ իմ ամուսնու համար,  
քո կինը, քո Քույրը,  
ինձ մոտ ե՛կ շուտով,  
որովհետև չեմ կարող չտեսնել քեզ  
այն օրից հետո, երբ հեռացար դու:  
Մութ է մեր շուրջը, թեն երկնքում է Ռան<sup>32</sup>:**

31 Տե՛ս Матве М. Э., նշվ. աշխ., էջ 53:

32 Հին Արևելքի պոեզիա, էջ 36:

Շատ ուշագրավ է, որ «Հրո երկիր» շարքը բացող բանաստեղծության մեջ Ե. Չարենցը նույնպես հին եգիպտացի բանաստեղծի նման կողք կողքի է դնում «քույր» և «կին» բառերը՝ իբրև միջական-գեղարվեստական հոմանիշներ (**«Ողջակիզվեն Արևի մեջ, քույր իմ, կին», «Ախ, կի՛ն – ցնորք, քո՛ւյր, Շամիրամ ու Աստվա՛ծ»**):

Երկրորդ դիտարկումը առնչվում է այն հարցին, թե արդյոք ուրիշ սիրերգակ բանաստեղծներ չե՞ն օգտագործել «քույր» բառը նույն նշանակությամբ: Այդպիսի դեպք մեկ անգամ հանդիպում է Ավետիք Իսահակյանի պոեզիայում (**«Քո՛ւյր իմ նազելի, նայիր քո դիմաց»**) և բազմիցս՝ Վահան Տերյանի բանաստեղծություններում: Ընդ որում, Վ. Տերյանը Ե. Չարենցի նման հաճախ է օգտագործում «քույր» բառը թե՛ իբրև կոչական-դիմելաձև (**«Իմ քույր, իմ դահիձ, իմ սուրբ սիրեկան»**), **«Քո՛ւյր իմ, դու չըկաս, քո՛ւյր իմ դու մեռար»**), թե՛ իբրև բառաձև (**«Նա մոտենում էր որպես քաղցր քույր...»**), **«Այսօր եղիր քրոջ պես»**, **«Ինձ այդպես, քրոջ պես մի՛ գթա...»**): Մի՞թե Ավ. Իսահակյանի և Վ. Տերյանի պարագայում նույնպես «քույր-սիրած էակ» փոխաբերությունը ինչ-որ ձևով առնչվում է հին եգիպտական գրականությանը: Վստահաբար կարելի է պնդել, որ նման հավանականություն չկա: Նրանց գործերում բացակայում է բնագրային այն շաղկապվածությունը, որ չարենցյան բազմապատիկ հաճախակի «քրոջը» կապում է Ամենտի եգերքի գեղարվեստական համատեքստին:

Մնում է ենթադրել, որ համաշխարհային գրականության մեջ կան «քույր» բառի փոխաբերական կիրառության ուրիշ ավանդույթներ, որոնցից բխել է Վահան Տերյանի բնագիրը: Դա կարող է լինել, ասենք, Աստվածաշնչի «Երգ երգոց» գիրքը, որի որոշ հատվածներում սիրող տղան աղջկան դիմում է հենց «քույր» բառով, ընդ որում, այն միշտ դրված է «հարս» բառի հետ. **«Կարոտով լցրիր մեր սիրտը, ո՛վ մեր քույր հարս»** (Երգ երգոց, 4.9), **«Ես իմ պարտեզը մտա, քո՛ւյր իմ հարս»** (Երգ երգոց, 5.1):

Բանն այն է, սակայն, որ Աստվածաշունչը մեծ ազդեցություն է կրել հին եգիպտական գրականությունից: **«Մեռյալների գրքից»** քրիստոնեության գլխավոր գրքին են անցել, օրինակ, օձերի հաճա-

խաղեպ խորհրդապատկերները, իմաստային և լեզվական ակնհայտ ընդհանրություններ կան հանգուցյալի պաշտպանական խոսքերի և սուրբգրական տասը պատվիրանների, նույն «Մեռյալների գրքի» և Հին Կտակարանի «Ժողովող» («Էկլեզիաստես») գրքի, հին եգիպտական անդրաշխարհի՝ Ամենտի թագավորության և անդրշիրիմյան կյանքի աստվածաշնչյան այլաբանությունների միջև: Նույն ձևով հին եգիպտական սիրերգության մեջ տեղ գտած «քույր-սիրեցյալի» պատկերը որոշ փոխակերպումով անցել է «Երգ երգոց» գրքին: Բայց եթե Ավ. Իսահակյանը և Վ. Տերյանը ներշնչվել են Աստվածաշնչից, դա միջնորդավորված ազդեցություն է նաև հին եգիպտական գրականությունից: Իհարկե, հնարավոր են նաև ուղիղ կամ միջնորդավորված ուրիշ ազդեցություններ: Մանավանդ որ նշված հեղինակները, նույնիսկ Ե. Չարենցը հին եգիպտական մշակույթի և գրականության հետ շատ առնչություններ չունեն: Ավ. Իսահակյանի գործերից այդ առումով հետաքրքիր են «Երջանկության իմաստը» (1923) արձակ գրույցը և «Սֆինքս» (1935) բանաստեղծությունը: Վ. Տերյանի ստեղծագործության մեջ Հին Եգիպտոսին ուղղակիորեն առնչվող քիչ փաստերից է «Եգիպտական բուրգերը փոշի կդառնան» ցնցող տողը: Իսկ Ե. Չարենցի բնագրերում այդպիսին են «Ամբոխները խելագարված» պոեմում տեղ գտած սֆինքսի ազդեցիկ պատկերը և 1937 թ. գրած «Լոտոս» բանաստեղծությունը՝ բնորոշ վերնագրով և նույնքան բնութագրական բովանդակությամբ:

### 3. Ամենտի եզերքը եվրոպական գրականության մեջ

Հին Եգիպտոսի մեռյալների թագավորության՝ Ամենտի աշխարհի մասին գիտեին դեռ անտիկ աշխարհում: Հին հույներն ու հռոմեացիները ոչ միայն տեղյակ էին դրա գոյությանը, այլև, ինչպես տեսանք Հադեսի ստորգետնյա թագավորության (կամ Աիդ եզերքի) օրինակով, կրել են Ամենտի եզերքի դիցաբանական և գեղարվեստական որոշ կողմերի ազդեցությունը:

Պատմագրության հայրը՝ մ.թ.ա. 5-րդ դարի հույն պատմիչ Հերոդոտոսը, որ եղել էր Եգիպտոսում, իր «Պատմության» երկրորդ գրքի 123-րդ հատվածում արտահայտում է այն կարծիքը, որ եգիպ-

տացիները աշխարհի առաջին ժողովուրդն էին, որ ունեին մարդկային հոգու անմահությանը վերաբերող ուսմունք: Հերոդոտոսը գրում է. «Բացի այդ, առաջինը եգիպտացիները ասել են, թե մարդկային հոգին անմահ է, թե մարմինը մահանալիս, հոգին անցնում է մեկ այլ կենդանի էակի, որն այդ պահին ծնվում է»<sup>33</sup>:

Մեռյալների թագավորության որոշ բաղադրիչներ անվանապես թափանցել են նաև անտիկ շրջանի գեղարվեստական գործեր: Մ.թ.ա. 1-ին դարի հռոմեացի բանաստեղծ Վերգիլիոսը «Էնեական» պոեմի «Էնեասի զենքերը» կոչվող ութերորդ գլխում պատմում է, որ Էնեասի վահանին այլ պատկերների հետ դրվագված էր նաև մեռյալների ուղեկից Անուբիսը. «Ամեն տեսակ հրեշ-աստված, նաև հաշան Անուբիսը»<sup>34</sup> («omnigenumque deum monstra et latrator Anubis»):

Ամենտի աշխարհին և մեռյալների դատավարությանը ծանոթ էր նաև նոր ժամանակների Եվրոպան: Առնվազն 19-րդ դարի սկզբից ընդհուպ մինչև «Մեռյալների գրքի» առաջին տպագրությունը դրանց վերաբերող վկայություններ ունեն ոչ միայն բոլոր նշանավոր եգիպտագետները (մասնավորապես՝ Ժան Ֆրանսուա Շամպոլյոնը), այլև այդ շրջանի պատմաբանները, փիլիսոփաները և գրողները: 1820-ական թթ. գերմանացի նշանավոր փիլիսոփա Հեգելը կրոնի փիլիսոփայությանը նվիրված դասախոսությունների մեջ վերլուծում է մեռնող և վերակենդանացող Օսիրիս աստծու դիցաբանական էությունը՝ գրելով. «Պատկերացման մեջ գոյություն ունեցողի կարգավիճակում Օսիրիսը բնութագրված է որպես Ամենտի թագավորության տիրակալ. նա կառավարում է ոչ միայն ողջերին, այլև նրանց, ովքեր զգայականորեն այլևս գոյություն չունեն, նրանց, ովքեր իրենց գոյությունը շարունակում են մարմիններից, ամենայն զգայականից և անցողիկից տարանջատված հոգիներով»<sup>35</sup>:

19-րդ դարի կեսերից Հին Եգիպտոսի թեման ներթափանցում է նաև Եվրոպայի գեղարվեստական գրականություն: Ուրիշ խնդիրների շարքում արձակագիրներն ու բանաստեղծները այս կամ այն չափով ուշադրություն են դարձնում նաև անդրշիրիմյան կյանքի, հոգու անմահության, այսինքն՝ Ամենտի աշխարհի մոտիվներին:

33 Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, թարգմանությունը Սիմոն Կրկյաշարյանի, Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1986, էջ 135:

34 Վերգիլիոս Պուբլիոս Մարո, Էնեական, Լատիներենից թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Գոհար Մուրադյանի և Արամ Թոփչյանի, Եր., «Զանգակ», 2018, էջ 284:

35 Гегель Г. В. Ф., Философия религии в двух томах, т. 2, М., «Мысль», 1977, с. 33.

Ինչպես եգիպտագիտության մեջ, այնպես էլ Հին Եգիպտոսի գեղարվեստականացման առումով առանձնապես հետաքրքրություն չեն դրսևորել ամերիկացիները: Սակավաթիվ բացառություններից կարելի է հիշել Էդգար Պոյի «Զրույց մումիայի հետ» պատմվածքը: Այն, ինչպես և նրա մի քանի այլ գործեր, գրված է հանգուցյալի վերակենդանացման գեղարվեստական հնարանքով, բայց ուղղակի որևէ առնչություն չունի անդրշիրիմյան աշխարհի դիցաբանական պատկերացումների հետ: Իսկ ահա Եվրոպայում փարավոնների երկրի սյուժեներին ու կերպարներին ավելի շատ դիմել են այն երկրների հեղինակները, որտեղ եգիպտագիտությունը հատկապես զարգացած էր:

Ֆրանսիայում, օրինակ, 19-րդ դարի կեսերին աչքի է ընկնում **Թեոֆիլ Գոթիեի** ստեղծագործությունը: Եգիպտոսը նորովի հայտնագործած Նապոլեոնի, ֆրանսիացի աշխարհահռչակ եգիպտագետներ Ժան Ֆրանսուա Շամպոլյոնի, Օգյուստ Մարիետի և Գաստոն Մասպերոյի հայրենակից գրողները չէին կարող անտարբեր լինել հին եգիպտական աստվածների և հավատալիքների նկատմամբ:

Թ. Գոթիեն 1858 թ. հրատարակել է «Մումիայի վեպը» արձակ ստեղծագործությունը, որում պատմվում է նաև Օսիրիսի և Ամենտի թագավորության մյուս աստվածների մասին: Վեպի հերոսները՝ անգլիացի լորդ Իվենդելը և գերմանացի եգիպտագետ Ռուսֆիուսը, հանդիպում են Նեղոսի հովտում գտնվող Բիբան էլ Մոյուկ դաշտում՝ Լուքսոր գյուղի մոտ: Նրանց ուղեկցում է հույն Արգիրոպոլոսը: Հասնում են եգիպտացիների կառուցած և թաքցրած դամբարաններին: Սարկոֆագով մումիան գտնելուց առաջ նրանք անցնում են ստորգետնյա սրահներով, որոնց պատերին փորագրված են մեռյալների դատի պատկերները. «Արդարության անգլուխ ոգիները մեռյալների հոգիները բերում էին Օսիրիսի մոտ՝ ձեռքերի սառած ուրվագծով, կարծես զսպաշապիկով կապված, շրջապատված Ամենտիի քառասուներկու դատավորներով, որոնք ունեին տարբեր կենդանիների գլուխներ...»<sup>36</sup>:

Ամենտի եգերքի հիշատակություններ կան նաև Թ. Գոթիեի ուրիշ արձակ գործերում: Ավելի վաղ գրված «Կլեոպատրայի պարգևած գիշերը» (1838) վեպը պատկերում է բավական ուշ շրջանի իրադարձու-

36 Gautier Th., Le Roman de la momie, Paris, "Hachette", 1858, p. 39.

թյուններ, բայց մի դրվագում դարձյալ հիշվում է մեռյալների դատը: Հերոսներից մեկը, որին Կլեոպատրան կասկածում է վարձու մարդապան լինելու մեջ, արդարանում է՝ ասելով, որ եթե ինքը իրոք չարագործ է, թող իր հոգին թեթև կշռի Ամենտիի կշեռքի վրա:

Նման մի դրվագային պատկեր էլ կա Թ. Գոթիեի «Մումիայի ոտքը» (1840) պատմվածքում: Վերակենդանացած մումիան, որ հազարամյակներ առաջ եղել է կաղ աղջիկ և հիմա ապաքինվել է, հերոսներին ասում է. «Մի՛ս, որքա՛ն կուրախսանա հայրս: Նա այնքան էր վշտացել, որ ես հաշմանդամ եմ դարձել. այսր ես նոր էի աշխարհ եկել, երբ նա հենց նույն օրը ամբողջ ժողովրդին հրամայել էր ինձ համար փորել այնքան խոր գերեզման, որ ես անվնաս մնայի մինչև Դատաստանի օրը, երբ Ամենտիի կշեռքով կկշռեին մահացածների հոգիները»<sup>37</sup>:

Գերմանացի գրողներից Հին Եգիպտոսի պատկերմանը ամենամեծ ուշադրությունը դարձրել է հայտնի պատմավիպասան **Գեորգ Հբերսը**: Այս օրինակը բնորոշ է իբրև գեղարվեստականի և գիտականի համադրություն, քանի որ Գ. Հբերսն ինքը եգիպտագետ էր՝ ոչ պակաս հայտնի, քան Կարլ Լեփսիուսը, Ադոլֆ Էրմանը, Կարլ-Ալֆրեդ Վիդեմանը և գերմանացի մյուս եգիպտագետները: Գիտական և դասախոսական գործունեությունից բացի՝ Գ. Հբերսը Եգիպտոսի պատմության և մշակույթի հանրայնացումով զբաղվել է նաև որպես գրող: Գրել է հին եգիպտական շարք, որ բաղկացած է տասներկու վեպից: 1860-ական թվականներից մինչև դարավերջ ձգվող այդ էպոպեայի առանձին մասերում վիպասանը ըստ հարկի տեղ է տալիս նաև մեռյալների թագավորության պատկերներին:

Իր առաջին՝ 1864 թ. լույս տեսած «Եգիպտական արքայադուստրը» վեպում (ռուսերեն և հայերեն ավելի հայտնի է «Փարավոնի դուստրը» վերնագրով) կա այսպիսի դրվագ. «Օսիրիսն այդ ժամանակ նստել էր բաղեղով պատված ամպհովանու տակ և ընդունում էր երկրի և ամենտայի բոլոր ոգիների խոնարհումը»<sup>38</sup>: Ուշագրավ է, որ Գ. Հբերսը (ինչպես և տասնամյակներ անց՝ Եղիշե Չարենցը) անհրաժեշտություն է զգացել ծանոթագրելու քիչ ծանոթ **«ամենտա»** հասկա-

37 Готье Т., Ножка мумии,

[https://librapage.blogspot.com/2013/12/nogkamumii.html?fbclid=IwAR0pE\\_bqCdWKNvr6BZ8zKDRVLsDsKC7YfN6ti\\_i4Y2SpYrruJONhow6dhr0](https://librapage.blogspot.com/2013/12/nogkamumii.html?fbclid=IwAR0pE_bqCdWKNvr6BZ8zKDRVLsDsKC7YfN6ti_i4Y2SpYrruJONhow6dhr0) (մուտք՝ 22.04.2022).

38 «Отечественные записки», т. 210, часть 9, С. Петербург, 1873, с. 177.

ցությունը. «Ստորգետնյա աշխարհ – եգիպտերեն *amenti*, բառացիորեն՝ արևմուտք, մահվան թագավորություն, ուր հոգին, ինչպես արևը մայրամուտից հետո, սուզվում է մարմնի մահից հետո: Պտղոմեոսի ժամանակների հիերոգլիֆային մի գրության մեջ, որ հաղորդում է Դյումիլսենը, ամենտին ուղղակի կոչվում է դժոխք»<sup>39</sup> (Յոհան Դյումիլսենը գերմանացի մեկ ուրիշ հայտնի եգիպտագետ է): Ամենտի աշխարհի հիշատակություններ կան նաև Գեորգ Էբերսի մյուս գործերում, մասնավորապես՝ եգիպտական շարքի երկրորդ՝ «Ուարդա» վեպում:

Ուոլլես Բաջի, Պետեր Ռենուֆի, Ալան Գարդիների, Հովարդ Քարթերի և բրիտանացի մյուս նշանավոր եգիպտագետների հայրենակիցը՝ **Հենրի Ռայդեր Հագարդը**, նույնպես առանձնահատուկ հետաքրքրություն էր տածում հին եգիպտական մշակույթի նկատմամբ և նույնիսկ ուներ սեփական հավաքածու: Ամենտի աշխարհի մասին դարձյալ հպանցիկ հիշատակություններ կան նրա «Կլեոպատրա» (1889) և «Փարավոնների դատը» (1913) վեպերում: «Կլեոպատրայի» հինգերորդ գլխում մանրամասն պատմվում է Օսիրիս աստծու հարությանը նվիրված տոնը, որի ժամանակ Իսիդայի անունից երգվող հիմնի մեջ ասվում է. «Ուզում եմ տեսնել քեզ՝ Ամենտիից հեռացածիդ»<sup>40</sup>: Տպավորությունն այն է, որ Հագարդի այս վեպում Ամենտի աշխարհը մեկնաբանված է որպես մռայլ, վատ տեղ, հավանաբար որպես դժոխքի համարժեք («Դու չես թաղվի, կմնաս գետնի երեսին պառկած և, աստվածներից անիծված, կուղևորվես Ամենտի, որտեղ քո հոգին հավերժ կդեզերի՝ այդպես էլ չմիավորվելով մարմնի հետ», «Կինը աշխարհում ամենաշատը սարսափում է երկու չարիքներից՝ մահվանից և ամուսնությունից, ընդ որում, մահը նրա համար ավելի նախընտրելի է, քանի որ մեզ հանգիստ է պարգևում, իսկ ամուսնությունը, եթե լինում է դժբախտ, մեզ ողջ-ողջ նետում է այն բոլոր տանջանքների մեջ, որ մեզ համար պատրաստել են Ամենտիի հրեշները»<sup>41</sup>):

Նկատելի օրինաչափություն է, որ 19-րդ դարի եվրոպացի վիպասանները Ամենտի աշխարհին անդրադառնում են հպանցիկորեն, վիպական առանձին դրվագներում: Եվ այնուամենայնիվ, նշված և համանման մյուս կիրառությունները ցույց են տալիս, որ համաշ-

39 Նույն տեղում:

40 Хaggard Г. P., Клеопатра, Харьков, «Клуб Семейного Досуга», 2012, с. 49.

41 Haggard H. R., Cleopatra, [https://en.wikisource.org/wiki/Cleopatra\\_\(Haggard\)](https://en.wikisource.org/wiki/Cleopatra_(Haggard)) (մուտք՝ 22.04.2022).

խարհային գրական միտքը որոշ հետաքրքրություն է ցուցաբերում հին եգիպտական մեռյալների աշխարհի նկատմամբ:

Ծանոթ էր արդյոք այս հեղինակներին եղիշե Չարենցը: Որոշակի փաստեր հայտնի չեն, բայց հավանականությունը լիովին բացառված չէ: Գիտենք, օրինակ, որ Թեոֆիլ Գոթիեն Չարենցի նախասիրած հեղինակներից էր, բայց գրական առնչության առկա փաստերը վերաբերում են առավելապես նրա պոեզիային: «Էմալե պրոֆիլը Ձեր» շարքի վերնագիրը բնագրային կապ ունի Թ. Գոթիեի «Էմալներ և կամեաներ» գրքի հետ: Իսկ այդ գրքում Ամենտի չկա, կան Հին Եգիպտոսին առնչվող ուրիշ գործեր, օրինակ՝ Փարիզում և Լուքսորում վեր խոյացող եգիպտական կոթողներին նվիրված բանաստեղծություններ: Ուղղակի վկայություն, որ Ե. Չարենցը ծանոթ էր Գ. Էբերսի ստեղծագործությանը, մենք չունենք: Բայց գերմանացի եգիպտագետ գրողը անծանոթ անուն չէր հայ իրականության մեջ: Նրա երկերը, ինչպես վկայում է նաև քիչ առաջ արված մեջբերումը, դեռևս գրողի կենդանության շրջանում թարգմանում էին նաև ռուսները: Հավանաբար հենց ռուսերեն թարգմանությունների միջոցով նրա գործերին ծանոթ էր Ռաֆֆին, որը Գ. Էբերսի «Եգիպտական փարավոնի աղջիկը» վեպի՝ որպես պատմավեպի ժանրի ցանկալի տիպարի մասին գնահատանքով է խոսում 1881 թ. գրած «Իմ ընթերցողներին» հոդվածում<sup>42</sup>: Իսկ արդեն հաջորդ տասնամյակում Գ. Էբերսի գործերը սկսեցին թարգմանվել նաև հայերեն: 1893 թ. Թիֆլիսում «Փարավոնի աղջիկը» վերնագրով լույս է տեսել Գ. Էբերսի եգիպտական առաջին վեպը՝ Գ. Շահբուդաղյանի թարգմանությամբ<sup>43</sup>: Իսկ արդեն գերմանացի նշանավոր պատմավիպասանի մահվան տարում հրատարակվել է նրա «Մարդ եմ» վեպը: Գերմաներենից կատարած իր այդ թարգմանության առաջաբանում Ստ. Մալխասյանցն ասում է, որ Գ. Շահբուդաղյանի թարգմանությունը Գ. Էբերսի վեպի «համառոտած խմբագրություն» է<sup>44</sup>: Եթե «Փարավոնի աղջիկը» լիներ վեպի ամբողջական թարգմանությունը, «Ամենտի» բառը առաջին անգամ հայերեն տառերով տպա-

42 Տե՛ս Ռաֆֆի, Երկերի ժողովածու 12 հատորով, հատ. 11, Եր., «Նաիրի», 1990, էջ 357-358:

43 Տե՛ս Էբերս Գ., Փարավոնի աղջիկը: Պատմական վեպ: Թարգմ. Գ. Շահբուդաղյան. Թիֆլիզի հայոց հրատ. ընկ., Թիֆլիս, տպ. Մ. Շարածեի, 1893:

44 Տե՛ս Էբերս Գ., Մարդ եմ (HOMO SUM). գերմաներեն բնագրից թարգմանեց Ստ. Մալխասյանց, Թիֆլիս, տպարան Մ. Դ. Ռոտինյանցի, 1898, էջ Դ:



գրված կլինեն արդեն 1893 թ.՝ Եղիշե Չարենցից մոտ երկուսուկես տասնամյակ առաջ<sup>45</sup>:

Ըստ Ալմաստ Զաքարյանի՝ Եղիշե Չարենցը պետք է որ ծանոթ լիներ լեհ արձակագիր **Բոլեսլավ Պրուսի** «Փարավոն» (1895) վեպին: Այդ վարկածը նա առաջ է քաշում Ե. Չարենցի 1916–1917 թթ. ստեղծագործությունները վերլուծելիս, երբ հատկապես «Ծիածանը» գրքի եգիպտական նշանների մեջ փորձում է կռահել համաշխարհային գրական «եգիպտամանիայի» ներգործությունը: «Եվ ահա, եգիպտական արվեստի (և ոչ միայն արվեստի) իմացության դեպքում ևս,– գրում է գրականագետը,– Չարենցի համար ակունքը մնում է Պոլյակովների նույն օրինված գրադարանը՝ լեհական գրականությունը: Այս անգամ էլ ի դեմս Բոլեսլավ Պրուսի և նրա «Փարավոն» վեպի»<sup>46</sup>: Աշխարհահռչակ այս վեպը հայրենիքում առանձին գրքով առաջին անգամ տպագրվելուց ընդամենը երկու տարի հետո լույս էր տեսել Ե. Չարենցին մատչելի լեզվով՝ ռուսերենով: Ա. Զաքարյանը որոշ մեջբերումներ է անում վեպից, խոսում «Մեռյալների գրքից» և դիտարկումները հիմնավորում Ռ. Շթայների մի գրքով, որ պահպանվել է Ե. Չարենցի գրադարանում: Այս ամենը շատ գնահատելի է որպես հին եգիպտական գրականության հետ ուղիղ և միջնորդավորված առնչություններին նվիրված եզակի դեպքերից մեկը չարենցագիտության մեջ:

Իրականում, սակայն, «Փարավոն» վեպում կան Օսիրիսի միֆին, հոգու անմահությանը, կարճ ասած՝ Ամենտի աշխարհին վերա-

45 Եղիշե Չարենցին նախորդած ժամանակաշրջանում՝ 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին, հատկապես արևմտահայերեն գրվել են հին եգիպտական մեռյալների թագավորությանը վերաբերող որոշ գործեր: 1890 թ. լույս տեսած մի գրքում կա «Պաշտամունք և արարողություն եգիպտացվոց» փոքրիկ ենթագլուխ (**Խորեն Եպիսկոպոս Մխիթարյան**, Պատմություն պաշտամանց և կրոնական արարողությանց հին և նոր ազգաց, Կ. Պոլիս, տպագր. «Հարություն Ասատուրյան» գրաշ. ընկ., 1890, էջ 26-27): Պոլսահայ մասնավոր լույս է տեսել «Հոգին և հանդերձյալ կյանքը հին եգիպտացիներու մեջ» ուսումնասիրությունը, որը Գ. Մասպերոյի ուսումնասիրությունից թարգմանաբար քաղել է Երվանդ վարդապետը («Բյուրակն», հանդես ազգային, գիտական, գրական և քաղաքական, Կ. Պոլիս, 1903, N 47, էջ 919-922): Բայց դրանցից ոչ մեկում «Ամենտի» անունը գործածված չէ:

Հին եգիպտական մեռյալների աշխարհին, հատկապես «Մեռյալների գրքին» վերջին տասնամյակներին հատուկ ուշադրություն է դարձրել բանաստեղծ, թարգմանիչ և գրականագետ Հ. Էդոյանը: Առանձին նմուշներ տեղ են գտել 1980-ական թթ. ռուսերենից թարգմանված երկու ժողովածուներում՝ «Ոսկե լուտոս» (1980) և «Հին արևելքի պոեզիա» (1982): Իսկ անկախության շրջանում նրա թարգմանությամբ և աշխատասիրությամբ հրատարակվել են ավելի ծավալուն մի քանի գրքեր՝ «Հին եգիպտական մեռյալների գիրքը: Մենագրություն» (Եր., «Կան Արյան», 2004), «Մեռյալների գիրք: Լիրիկա: Հին Եգիպտոս» (Եր., «Առերեսում-Անի», 2004), «Աստվածների ժամանակը: Հին եգիպտական պոեզիա» (Եր., «Սարգիս Խաչենց», 2007):

46 **Զաքարյան Ա. Գ.**, Եղիշե Չարենց. կյանքը, գործը, ժամանակը, գիրք 1, Եր., ՀՀ ԳԱԱ հրատ., 1997, էջ 233:

բերող շատ ավելի շոշափելի պատկերներ: Ամբողջովին դրանց է նվիրված վեպի երրորդ մասի 4-րդ գլուխը, որտեղ պատմված են Ռամզես XII փարավոնի մահը և հետմահու կյանքը: Յոթանասուն օր, զմռսվելուն զուգահեռ, հանգուցյալը անցկացնում է անդրշիրիմյան աշխարհում, որտեղ տիրում են Օսիրիսը, Իսիդան և եգիպտական մյուս աստվածները: Նկարագրվում են շնագայլի գլխով Անուբիս աստվածը, մեռյալի սրտի կշռումը և նրա հայտնի խոստովանությունը, արվում են մեջբերումներ ինչպես «Մեռյալների գրքից», այնպես էլ հայտնի եգիպտագետների, մասնավորապես՝ Գ. Մասպերոյի մտքերից: Անդրշիրիմյան եզերքի նկարագրության բարձրակետերից մեկը Ամենտի աշխարհի բնորոշումն է. «Նա կհաղթի աստվածներին Ամենտի լեռան տիրակալի՝ Օսիրիսի կամքով:

Ի՞նչ է դա:

Ամենտին Օսիրիսի՝ Ամենտի լեռան տիրակալի կամքով աստվածների հոգիների ստեղծածն է: Այլ կերպ ասած՝ Ամենտին Ռայի առաջացրած բռնկումն է. յուրաքանչյուր աստված, որ հայտնվում է այնտեղ, պայքար է մղում»<sup>47</sup>: Բուլեալավ Պրուսը իմացություններով և վեպում դրանք օգտագործելու հնտությամբ չի զիջում արհեստավարժ եգիպտագետ Գեորգ Էբերսին: Այսպես, երբ նա խոսում է Ամենտիի՝ որպես տեղանվան մասին, նկատի ունի հին եգիպտացիների այն սովորությունը, որ Ամենտի (կամ Ամենտ) էին կոչում Նեղոսի ափին գտնվող այն լեռը, որ ընկած էր Թեբեի դիմաց:

Շատ հետաքրքիր է նաև այն հարցը, թե Ամենտի եզերքը ինչ դրսևորումներ է ունեցել մինչհարենցյան եվրոպական պոեզիայում: Չէ՞ որ Ե. Չարենցի Ամենտի եզերքն ունի բացառապես բանաստեղծական ձևավորում: Նրա ամենասիրելի հեղինակներից մեկը՝ անգլիացի բազմաժանր գրող **Օսկար Ուայլդը**, 1884 թ. գրել է «Մֆինքս» ծավալուն բանաստեղծությունը: Մֆինքսի հետ վարած երկար զրույցում բանաստեղծը ներառում է Հին Եգիպտոսի պատմության և մշակույթի բազմաթիվ իրողություններ, այդ թվում՝ մեռյալների թագավորությանն առնչվող աստվածներին («Տեսե՛լ ես արդյոք, թե ինչպես անհանգստացած Իսիդան գնում էր դեպի Օսիրիսը», «Գիտեի՞ր դու Թոթի ահեղ տեսքը», «ենթարկվելով ճակատագրին՝ սարկոֆագից ելնում

47 Полное собрание сочинений Болеслава Пруса (Александра Гловацкаго). Пер. с польск. В.И. Маноцкий, том первый, Киев; Харьков, Южно-русское кн-во Ф.А. Иогансона, 1899, с. 239.

էր մեռյալը» և այլն): Իսկ մի հատվածում Օ. Ուայլդը հատուկ պատկերում է մեռյալների թագավորության աստված Անուբիսին.

**В Египет! Не страшна утрата!  
Один лишь Бог сходил во тьму,  
Пронзило бок лишь одному  
Копье сурового солдата.**

**А эти? Нет, они живут!  
Анубис все сидит в воротах,  
Набрал он лотосов в болотах,  
Они хребет твой обовьют<sup>48</sup>.**

Եթե Եղիշե Չարենցը նույնիսկ ծանոթ չի եղել Օսկար Ուայլդի այս բանաստեղծությանը, մշակութային և պոետիկական առնչությունները հստակ են: Բայց շատ մեծ է հավանականությունը, որ մինչև իր «Ամենտի» գիրքը ստեղծելու փորձը նա կարդացել էր այդ գործը: Գաղտնիք չէ, որ Ե. Չարենցը աշխարհի գրականությանը հաղորդակցվում էր հիմնականում ռուսերեն թարգմանություններով: Ինչպես տեսանք, «Սֆինքս» բանաստեղծությունն այդ լեզվով տպագրվել է չարենցյան Ամենտի եզերքի հղացումից մի քանի տարի առաջ՝ 1912 թ.: Ընդ որում, այն թարգմանել է Չարենցին շատ սիրելի մեկ ուրիշ բանաստեղծ՝ Նիկոլայ Գումիլյովը, որի պոեզիան նույնպես հագեցած է Հին Եգիպտոսով:

Ըստ երևույթին, Եգիպտագիտության հզոր ալիքի առկայությամբ 19-րդ դարի երկրորդ կեսին հին աշխարհամասի գեղարվեստական գրականություն եգիպտական թեմայի ներթափանցումը խիստ բնական էր: Իսկ դարավերջին, ինչպես ցույց են տալիս Բ. Պրուսի և Օ. Ուայլդի՝ 1890-ական թթ. գրված հիշյալ գործերը, նման մի միտում նկատելի էր հենց մեռյալների աշխարհի գեղարվեստականացման առումով:

Հին եգիպտական դիցաբանության վառ պատկերների նկատմամբ հակում ունեին նաև 19-րդ դարի ֆրանսիացի բանաստեղծները, հատկապես պառնասական դպրոցի ներկայացուցիչները (Թեոֆիլ Գոթիե, Լըկոնտ դը Լիլ, Ժոզե Մարիա դը Հերեդիա): Այդ հոսանքին հա-

48 Уайльд О., Полное собрание сочинений, т. 4, Санкт-Петербург, Издатель: Маркс А. Ф., 1912, с. 11.

րող մի բանաստեղծ՝ **Անդրե դը Գերնը**, որը կարծես թե անծանոթ է և՛ հայ, և՛ ռուս ընթերցողներին, նույն 1890-ական թթ. հրատարակել է «Մեռած դարեր» վերնագրով երեք գրքեր: Դրանցից առաջինում («Les Siècles morts, Alphonse Lemerre éd., 1890, I. L’Orient antique (p. 92-123)») ֆրանսիացի բանաստեղծն ունի «Ամենտի» («L’Amenti») վերնագրով մի բանաստեղծություն: Որքան մեզ հայտնի է, դա «Ամենտի» վերնագրով առաջին ստեղծագործությունն է համաշխարհային գրականության մեջ (բայց ոչ վերջինը):

Մոտ տասը էջ կազմող ծավալուն բանաստեղծությունը, որ կարող է համարվել նաև պոեմ, գրված է հին եգիպտական սկզբնաղբյուրների և պառնասական բանաստեղծի գեղարվեստական երևակայության համադրումով: Այն ունի բնաբան՝ քաղված «Մեռյալների գրքի» ֆրանսերեն թարգմանությունից: Այդ ծիսական գիրքն օգտագործված է նաև բուն բնագրում, որը թաղման և հոգու հավերժացման դիպաշարը ներկայացնում է վիպական, քնարական և դրամատիկական-ասերգային եղանակներով: Նախերգանքին հաջորդող գլուխները կոչվում են «Ողբասացները», «Առաջին քնարահարը» և «Երկրորդ քնարահարը»:

Անկախ գեղարվեստական բոլոր յուրահատկություններից՝ Անդրե դը Գերնի «Ամենտի» բանաստեղծության մեջ կան չարենցյան Ամենտի եզերքին բնորոշ մի շարք միավորներ՝ սիրած աղջիկ-քույրը («**Փթթող կրծքի շուրջը կույսի՝ քո քրոջ**»), մահը՝ որպես հավերժացում («**Մեռնել նշանակում է տարրալուծվել անսահման սրտում**»), սրտի մեղքերը («**Ոչ էլ իմ սրտի մեղքը, որը չի խախտում հավասարակշռությունը**»), աստղազարդ երկինքը («**Comme un ciel étoilé**»), երբեմն-երբեմն առկայծող պայծառ կապույտ-լազուրը, վառ ոսկեգույնը և արյունոտ մանուշակագույնը («**dans l’azur**», «**dorés par le matin**», «**la pourpre ensanglante**»): Իսկ ամենակարևոր ընդհանրությունը հոգու և մարմնի միաձուլման, հոգու անմահության երազանքն է.

**Եվ քո թափառական հոգին և քո պառակտված մարմինը,  
Ինչպես երկու թռչուններ՝ տարված թևավոր շնչով,  
Միացած հատուցման ժամանակի վերջում,  
Սուզվեն լույսերում և ճախրեն փառքի մեջ<sup>49</sup>:**

---

49 Le Vicomte de Guerne, L’Amenti,

Ընդհանուր գծերով այսպիսին է նախաչարենցյան եվրոպական գրականության մեջ հին եգիպտական Ամենտի անդրշիրիմյան աշխարհի գեղարվեստականացման համառոտ պատկերը: Իսկ ահա հետչարենցյան եվրոպական գրականության մեջ կան միայն թեմայի եզակի անդրադարձներ:

Զարմանալիորեն Հին Եգիպտոսի պատմության և արվեստի նկատմամբ գիտնականների և գրողների ուշադրությունը մեծացել է վերջին տասնամյակներին: Ֆրանսիացի ժամանակակից բանաստեղծ Գիլ ժալեն (ծնվել է 1956 թ. Փարիզում) ունի «Ամենտի» վերնագրով բանաստեղծություն, որի վերջում հիշատակվում է նաև հոգու կրկնորդը՝ Կան<sup>50</sup>: Իսկ անգլիացի վաղամեծիկ հեղինակ, մասնագիտությամբ եգիպտագետ Պոլ Սասմանը (1966–2012) կյանքի վերջում գրել է «Օսիրիսի լաբիրինթոսը» վեպը<sup>51</sup>: Այն արդիական նյութով շարադրված թրիլեր է: Ֆանտաստիկական թրիլեր (ֆենթեզի) է նաև գերմանացի գրող Վոլֆգանգ Հոլբայնի (ծնվել է 1953 թ.) «Անուբիս» վեպը՝ գրված 2005 թ.:

Ինչպես և սպասելի էր, նշված հեղինակների գործերը ավանդական թափառիկ սյուժեների ժամանակակից անհատական մեկնաբանություններ են: Բայց ի վերջո այդպես է եղել միշտ՝ և՛ եվրոպացի դասական հեղինակների, և՛ Եղիշե Չարենցի պարագայում:

#### 4. Հին եգիպտական մեռյալների աշխարհը ռուս գրականության մեջ

Հին եգիպտական դիցաբանությունը և մասնավորապես անդրշիրիմյան Ամենտի աշխարհի հավատալիքը ռուս պատմաբաններին, հնագետներին, աստվածաբաններին և գրողներին ծանոթ էին դեռևս 19-րդ դարի կեսերից: Այդ հետաքրքրությունն ավելի մեծացավ դարավերջին և 20-րդ դարի սկզբին: Հին Եգիպտոսի թեմաները, աշխարհագրությունը («տոպոս»), պատմությունը, հատկանունները և

[https://fr.wikisource.org/wiki/Les\\_Si%C3%A8cles\\_morts/L%E2%80%99Amenti](https://fr.wikisource.org/wiki/Les_Si%C3%A8cles_morts/L%E2%80%99Amenti) (մուտք՝ 22.04.2022).

50 Տե՛ս l'Amenti par Gilles Jallet, [https://www.sitaudis.fr/Poemes-et-fictions/l-amenti-1610746036.php?fbclid=IwAR0eW\\_xo\\_2wot3xUBnIC23VzxFBk0E6fSr-gVmEu0kXNtLYFU0bw5xqS5\\_U](https://www.sitaudis.fr/Poemes-et-fictions/l-amenti-1610746036.php?fbclid=IwAR0eW_xo_2wot3xUBnIC23VzxFBk0E6fSr-gVmEu0kXNtLYFU0bw5xqS5_U) (մուտք՝ 22.04.2022):

51 Տե՛ս Сассман П., Лабиринт Осириса,

[https://royallib.com/book/sassman\\_pol/labirint\\_osirisa.html?fbclid=IwAR1-PNsqdP4OTGlsK8rUaPG6eUMusFmmZ0LrhN\\_C4vIW1C7x9E1frBm4VEY](https://royallib.com/book/sassman_pol/labirint_osirisa.html?fbclid=IwAR1-PNsqdP4OTGlsK8rUaPG6eUMusFmmZ0LrhN_C4vIW1C7x9E1frBm4VEY)

(մուտք՝ 22.04.2022):

կերպարները առանձնապես մեծ տեղ են գրավում «արծաթե դարի» ռուս բանաստեղծների, առավելապես խորհրդապաշտության ներկայացուցիչների ստեղծագործության մեջ: Ըստ ժամանակակից ռուս գրականագետ, «Ռուսական եգիպտոս: Միխայիլ Կուզմինի ավերասանդրյան պոետիկան» երկհատոր մենագրության հեղինակ **Լադա Պանովայի**՝ անցյալ դարասկզբին ռուսական պոեզիայում տիրում էր մի յուրատեսակ «եգիպտամանիա»: Այն մի զգալի մասով ներշնչված էր եվրոպական պոեզիայից, հատկապես անգլիացի բանաստեղծ Պերսի Բիշի Շելլիի և ֆրանսիացի պառնասականների փորձից, թեև եգիպտական թեման եղել էր նաև ռուս գրականության մեջ (Ա. Պուշկինի «եգիպտական գիշերները»): «Երեք տասնամյակի ընթացքում՝ 1890-ական թվականներից մինչև 1920-ական թվականները,՝ գրում է Լ. Պանովան,՝ ռուս բանաստեղծները (ներառյալ Մ. Ա. Կուզմինը) եգիպտական թեմաներով գրել են ավելի քան երկու հարյուր բանաստեղծություն և պոեմ: Համեմատության համար ասենք՝ ամբողջ 19-րդ դարում՝ մինչև նշանավոր փիլիսոփա **Վ. Ս. Սոլովյովը**, դրանց թիվը հազիվ հասնում էր երեք տասնյակի»<sup>52</sup>:

**Գրական այս մեծ հոսքի մեջ մեզ, բնականաբար, առաջին հերթին հետաքրքրում են հին եգիպտական անդրաշխարհի թեմային նվիրված գործերը և դրանցում ձևավորված գաղափարների ու սկզբունքների համեմատությունը Եղիշե Չարենցի գործերի հետ:** Օսիրիսի միֆին և Ամենտի եգեթին բոլոր ժամանակների ռուս հեղինակներից ամենաշատը անդրադարձել է **Կոնստանտին Բալմոնտը**, որի հետ էլ ամենասերտ առնչություններն ունի չարենցյան Ամենտին:

Եգիպտական թեման նոր շրջանի ռուսական պոեզիայում սկզբնավորել է Վ. Սոլովյովը, հետևողականորեն շարունակել են Վյաչեսլավ Իվանովը, Ալեքսանդր Բլոկը, Իվան Բունինը, Վալերի Բրյուսովը, Միխայիլ Կուզմինը և ուրիշներ:

Նշանավոր գրող **Իվան Բունինը**, որ հետագայում Նոբելյան մրցանակի արժանացավ ռուսական արձակի ավանդույթները զարգացնելու համար, նաև շատ ինքնատիպ բանաստեղծ էր: 1906 թ. նա

52 Панова Л. Г., Русский Египет. Александрийская поэтика Михаила Кузмина, <http://www.ruthenia.ru/document/539093.html> (մուտք 22.04.2022).

գրել է «Դագաղի հետևում» («За гробом») վերնագրով մի բանաստեղծություն, որը փաստացի ներկայացնում է Ամենտի աշխարհում հայտնվելու հերոսի երազանքը, թեև բնագրում հենց «Ամենտի» բառը բացակայում է: Ի. Բունինը բնաբան է դարձրել «Մեռյալների գրքի» 125-րդ գլխում հանգուցյալի արտասանած պաշտպանական խոսքի ամենից տպավորիչ նախադասություններից մեկը՝ «Ես չեմ հանգցրել սրբազան կրակը»: Իսկ բուն բանաստեղծությունն արդեն իր՝ քնարական հերոսի «հերքման խոստովանությունն» է Օսիրիսի դատի ժամանակ՝ սրտի կշռման պահին:

Ի. Բունինի այս բանաստեղծությունը սկզբնապես վերնագրված է եղել հենց «Դատի օրը» («В день суда»): Հետագայում հեղինակը փոխել է վերնագիրը, ինչպես նաև նախավերջին տողի սկիզբը, որը դարձել է «Но я страдал»: Բանաստեղծությունը, որը հանգիստ կարող էր կոչվել նաև «Ամենտի», առաջին անգամ տպագրվել է Ե. Չարենցի «Ամենտի» գրքի հղացումից մոտ տասը տարի առաջ՝ 1907 թվականին.

**В подземный мир введет на суд Отца  
Сын, Ястреб-Гор. Шакал-Анубис будет  
Класть на весы и взвешивать сердца:  
Бог Озирис, бог мертвых, строго судит.**

**Я погребен, как раб, в песке пустынь.  
Пройдут века - и Сириус, над Нилом  
Теперь огнем горящий, станет синь  
Да светит он спокойнее могилам.**

**И мир забудет, темного, меня.  
И на весах потянет сердце мало.  
Но я им жил. Я не тушил огня.  
И я взгляну без страха в лик Шакала**<sup>53</sup>.

Ի. Բունինի բանաստեղծության մեջ նկատելի են թե՛ Ե. Չարենցի բանաստեղծություններին մոտեցող, թե՛ դրանցից տարբերվող բաղադրիչներ: Վերջին առումով էական է թվում հատկապես Սիրիուս աստղին վերաբերող տունը, որ ակնարկում է այդ ամենա-

53 «Русская мысль», М., 1907, март, N 3, с. 198.

պայծառ աստղի «ներկայությունը» Հին Եգիպտոսի դիցաբանական պատկերացումներում և հատկապես նրա առնչությունը մեռյալների հոգիների հետ:

Եգիպտական դիցաբանության մեջ գործում էր նաև բազմաբաղադրիչ հոգու ըմբռնումը: Ըստ դրա՝ մարդու էության բաղադրիչներն են ֆիզիկական մարմինը, հոգեկան մարմինը, սիրտը, կրկնորդը, անունը և այլն: Սրանցից թերևս ամենաբարդը, որին նոր ժամանակների մասնագետները, Գ. Մասպերոյին հետևելով, տվել են «կրկնորդ» բնորոշումը, «Մեռյալների գրքում» և այլ պապիրուսներում կոչվում էր **Կա**: Այն Ամենտի աշխարհին հարաբերակցվում է նրանով, որ նույնպես կապված է մարդու անմահության հավատալիքի հետ: Իր եգիպտական նոթագրության մեջ Կային անդրադարձել է Կ. Բալմոնտը, իսկ **Վելիմիր Խլեբնիկովը** 1915 թ. գրել և 1916 թ., այսինքն՝ Ե. Չարենցի «Ամենտի» գրքի հղացման տարում, տպագրել է մի վիպակ, որը վերնագրված է հենց «Կա»: «Եգիպտոսը Խլեբնիկովի ստեղծագործության մեջ» հոդվածում վիպակի էությունը լավ է մեկնաբանում ամերիկացի սլավոնագետ Հենրիկ Բարանը. «Հանգուցյալը մարմնապես պետք է պահպանվեր. այդ հիմնական պայմանը ձեռք էր բերվում զմռսումով... Ներսից, ինչպես մումիայի տներ, մահացածի «հոգու մասերը» կարող էին կատարել ճանապարհորդություններ: Գլխավոր մասն էր Կան՝ երազուն հոգին: Նա արդեն կենդանության օրոք ապացուցում էր իր ձգտումը դեպի թափառումը»<sup>54</sup>: Հին եգիպտացիների հավատալիքների համաձայն՝ Կան թափառումներից հետո կարող էր վերադառնալ իր մարմնի մոտ, հաճախ էլ վերաբնակվում էր արձանների մեջ:

Այս հիմքի վրա Վ. Խլեբնիկովը գրել է վիպակ կամ ծավալուն պատմվածք (գրականագետներն այն համարում են վիպակ), որն ունի տեսլային-ֆանտաստիկական բնույթ: Կան պատմողի ընկերն է, որը նրան տանում է տեղից տեղ և ժամանակից ժամանակ՝ մերթ 2222 թվականի մի պրոֆեսորի, մերթ Ամենհոտեպ փարավոնի մոտ: Վիպակում տրված է հերոսի հետևյալ բնորոշումը. «Իսկ Կան հոգու ստվերն է, նրա կրկնորդը... Նա ժամանակի մեջ սահմանափակում-

---

54 Баран Х., О Хлебникове. контексты, источники, мифы, М., Российский государственный гуманитарный университет, 2002, с. 142.



ներ չունի. Կան անցնում է երազներից երազներ, հատում է ժամանակը և հասնում բրոնզին»<sup>55</sup>:

Վ. Խլերնիկովի այս ստեղծագործությունը Ամենտի աշխարհին հարում է մեռյալների ճակատագրի և հոգու անմահության մոտիվներով: Գերազանցապես խորհրդապաշտությանը հետաքրքրող այս նյութը «Կա» վիպակի շնորհիվ թափանցեց նաև ռուսական ֆուտուրիզմի մեջ: Այդ միտումը առհասարակ բնորոշ է ռուս գրականությանը, որը հետագա տասնամյակներին շարունակում է մեռյալների թագավորության մոտիվների գեղարվեստական մշակումը: 1920–1930–ական թթ. գրված գործերը մի զգալի մասով զարգացնում են «արծաթե դարի» ռուսական պոեզիայի միտումները:

Գրականության եգիպտական թեքմանը մեծապես նպաստեց նաև ռուսական գրականագիտության բարձր մակարդակը: 1920 թ. լույս տեսավ եգիպտագիտության մեծագույն դեմքերից մեկի՝ ակադեմիկոս Բորիս Տուրանի «Եգիպտական գրականություն» գրքի առաջին հատորը (երկրորդը չի տպագրվել հեղինակի մահվան պատճառով): Այդ մենագրության մեջ ընդարձակ ենթազլույս է հատկացված հին եգիպտական «Մեռյալների գրքին»<sup>56</sup>:

Չարենցի ժամանակներում, ավելի ստույգ՝ 1920–1922 թթ., «Մեռյալների գրքից» վերնագրով բանաստեղծություն է գրել հենց «արծաթե դարի» ռուս բանաստեղծուհի **Չերուբինա դը Գաբրիակը**, որ ավելի հայտնի է Ելիզավետա Իվանովնա Դմիտրիևա (Վասիլևա) անունով (1887–1928): Բանաստեղծության հենց սկզբում նկարագրված են Ամենտի դաշտերը, Իսիդա աստվածուհին և նրա որդի Հորուսը, Ռա աստծու նավակը, որով մեռյալների հոգիները տեղափոխվում էին երանության դաշտեր:

**Горус, светлый сын Изиды,  
просветленная душа.  
Ты пришел в поля Аменти, —  
барка Ра плывет по небу, —  
ты достигнул барки Ра**<sup>57</sup>.

55 Хлебников В., Творения, М., «Советский писатель», 1986, с. 524.

56 Տէս Կուրաև Բ. Ա., Египетская литература, т. I. Исторический очерк древнеегипетской литературы, М., издание М. и С. Сабашниковых, 1920, էջ 122-139:

57 Черубина де Габриак, Из «Книги Мертвых»,

<http://www.synnecgoria.com/tsvetaeva/WIN/silverage/cherubina/stihi2022.html#0044> (մուտք՝ 22.04.2022).

Ավելի ուշ՝ 1930 թ., «Ամենտի – մայրամուտային եզերք...» վերնագրով բանաստեղծություն է գրել «արծաթե դարի» մեկ ուրիշ ներկայացուցիչ՝ **Վարվառա Մալախիևա-Միրովիչը**: Այս վերնագիրը մասամբ, բայց բառացի կրկնում է Ե. Չարենցի տված տողատակի ծանոթագրությունը: Հավանաբար երկուսն էլ ծագում են նույն սկզբնաղբյուրից.

**Аменты – край закатный. Розы.  
Прощальная улыбка Ра.  
Сапфиры виноградных гроздий,  
Рубин Костра.**

**Фламинго розовая стая  
В разливе пламенных небес.  
Малиновая, золотая  
Страна чудес<sup>58</sup>.**

Վկայակոչված երկու օրինակները անգամ վերնագրերով ու բառապաշարով շատ մոտ են հայ բանաստեղծի գործերին: Դրանք ցույց են տալիս, որ Եղիշե Չարենցի հետաքրքրությունն ու «Ամենտի» գիրք ստեղծելու ցանկությունը դիպվածներ չէին, այլ գրական-պատմական ընթացքի օրինաչափ միտումներ: Այս հանգամանքն ավելի է ընդգծվում նրանով, որ հիշյալ երկու բանաստեղծուհիները հաստատապես ծանոթ չէին Ե. Չարենցի ստեղծագործությանը (և հակառակը): Թեմայի գրավչությունը և արդիականությունը հաստատող այս օրինաչափությունը արտահայտվում է նաև Ե. Չարենցին շատ լավ ծանոթ որոշ հեղինակների ստեղծագործության մեջ:

Առնչության անուղղակի դրսևորում է Աննա Ախմատովայի մի բանաստեղծություն՝ «Բոլոր սիրելիների հոգիները բարձր աստղերի վրա են»: Հատկապես դրա առաջին տողը ենթաբնագրային հեռավոր կապ ունի Իսիդայի և Օսիրիսի սիրո պատմության, երկնքում գտնվող Դուատի, այդքանով իսկ՝ Ե. Չարենցի «Իմ բարձր, հին ու աստղային երազների ձանապարհով» տողի և «Ծիածանի» այն պատկերների հետ, որոնց մեջ հերոսն իր երջանկությունը տեսնում է մահվանից հետո իրենց հոգիների՝ հեռավոր աստղերի վրա հավերժանալու երա-

58 Малахьева-Мирович В. Г., Хризалида, «Стихотворения», М., «Водолей», 2013, с. 282.

զանքի մեջ («Քո՛ւյր, անցնում եմ, որպես աստղ, հոգիս – մեռած աստղի փայլ»):

Все души милых на высоких звездах.  
 Как хорошо, что некого терять  
 И можно плакать. Царскосельский воздух  
 Был создан, чтобы песни повторять<sup>59</sup>.

Օսիրիսի միջի և Դուստի հետ Ա. Ախմատովայի տողի համադրումը արել է Անդրեյ Զուբովը «Հարություն առած Օսիրիսը» շատ հետաքրքրական դասախոսության մեջ՝ այդ առիթով հիշելով նաև հին հնդկական «Մահաբհարաթա» պոեմի մի տողը. «Իսկ դու չգիտե՞ս, որ մահացածներն այստեղից երևում են որպես փայլուն աստղեր»<sup>60</sup>: Հավելենք, որ բանաստեղծությունը Ա. Ախմատովան գրել է սիրելի մարդու՝ մեծ բանաստեղծ Նիկոլայ Գումեյլովի գնդակահարությունից անմիջապես հետո՝ 1921 թ. աշնանը:

1920–1930–ական թթ. Ամենտի աշխարհին վերաբերող մի քանի արդեն ուղղակի անդրադարձ ունի Ե. Չարենցին լավ ծանոթ մի հեղինակ՝ «արծաթե դարի» նշանավոր ներկայացուցիչ **Դմիտրի Մերեժկովսկին**: Մասնավորապես 1925 թ. գրած «Երեքի գաղտնիքը. Եգիպտոս և Բաբելոն» գրքի մի դրվագում նա մեռյալի պաշտպանական խոսքին և Ամենտի անցնելու տեսարանին վերաբերող մեջբերումներ է անում «Մեռյալների գրքի» 125–րդ և 126–րդ գլուխներից: Հպանցիկ դրվագներ, Ամենտի աշխարհի փոքրիկ նկարագրություններ և մտքեր կան նաև Մերեժկովսկու ուշ շրջանի ուրիշ գործերում՝ «Աստվածների ծնունդը. Թութանհամոնը Կրետեում» ժողովածուի մեջ (1924), «Մեսիա» վեպում (1928), «Արևմուտքի գաղտնիքը. Ատլանտիդա–Եվրոպա» գրքում (1930): Վերջինում կա շատ ինքնատիպ ու հակիրճ մի զուգադրում: Դ. Մերեժկովսկին Ամենտին դնում է տարբեր ժողովուրդների անդրշիրիմյան աշխարհների հետ մի շարքում. «Այստեղ մեռյալների թագավորություն է – իսրայելա–

59 Ахматова А. А., Сочинения в двух томах, т. 1, М., «Правда», 1990, с. 175.

60 Зубов А. Б., Воскресший Осирис,

[https://abzubov.com/new\\_course/lecture\\_017?fbclid=IwAR07rppyxTeELzYyY4xeJzrXhII GcKbXSMvNakdlcqbL06furqPZORADqEo](https://abzubov.com/new_course/lecture_017?fbclid=IwAR07rppyxTeELzYyY4xeJzrXhII GcKbXSMvNakdlcqbL06furqPZORADqEo) (մուտք 23.04.2022).

կան school, բաբելոնյան arallu, եգիպտական amenti – հավերժական Արևմուտք, «բոլոր արևների Մայրամուտ»»<sup>61</sup>:

Ինչպես եվրոպական երկրներում, Ռուսաստանում նույնպես 21-րդ դարի սկզբին նկատելիորեն աշխուժանում են եգիպտագիտությունը և եգիպտական թեմաներով գեղարվեստական գրականությունը: Վերջին տասնամյակներին գրվել և տպագիր ու էլեկտրոնային տարբերակներով հրատարակվել են Ամենտի աշխարհին և նրա բաղադրիչներին առնչվող մի շարք հետաքրքրական գործեր: Ինչպես երևում է, մեր օրերի հեղինակներին առանձնապես շատ է հետաքրքրում Ամենտի աշխարհում մեռյալներին ուղեկցող Անուբիսը: Առնվազն վերնագրով նրան առնչվող արձակ գործեր են հրատարակել նաև գործող ռուս հեղինակներ Կոնստանտին Գոթին («Օդանավակայան, կամ Երկու օր Անուբիսի հետ», 2017)<sup>62</sup> և Անդրեյ Անկը («Անուբիսի հետքերով»)<sup>63</sup>:

Դուատի մասին, ինչպես տեսանք, թե՛ հին եգիպտական պապիրուսներում, թե՛ գիտական աշխատանքներում կան նույնքան շատ վկայություններ, որքան և Ամենտի աշխարհի: Բայց Դուատի մասին, ի տարբերություն Ամենտիի, գեղարվեստական գործերը հազվադեպ են: Եվ ահա բոլորովին վերջերս՝ 2018 թ., ռուս հեղինակ Ալեքսա Բոգունովան գրել է «Սկանդալ Դուատում» ստեղծագործությունը, որը մեր օրերում եգիպտական Հուրգադա քաղաքում տեղի ունեցող ընտանեկան բախումների մասին պատմող արկածային վեպ է՝ քաղաքային ֆենթեզի ժանրատեսակով<sup>64</sup>:

## 5. Ամենտի եզերքը Կոնստանտին Բավմոնտի ստեղծագործության մեջ

**Եղիշե Չարենցի ստեղծագործության մեջ գեղարվեստորեն մարմնավորված «Ամենտի եզերքը» ամբողջ ծավալով և խորությամբ պարզաբանելու համար երևույթը պետք է դիտարկել գրականագիտական մի քանի շրջանակների մեջ՝ Ե. Չարենցը և**

61 Мережковский Д. С., Тайна трех, М., «Республика», 1999, с. 290.

62 Տե՛ս Գոթե Կ., Аэропорт, или Два дня с Анубисом, <https://www.litres.ru/konstantin-gote/aeroport-ili-dva-dnya-s-anubisom/chitat-onlayn/> (մուտք 22.04.2022):

63 Տե՛ս Անկ Ա., По следам Анубиса, [https://ridero.ru/books/po\\_sledam\\_anubisa/freeText](https://ridero.ru/books/po_sledam_anubisa/freeText) (մուտք՝ 22.04.2022):

64 Տե՛ս Богунова А., Скандал в Дуаге, <https://readli.net/chitat-online/?b=1092954&pg=1> (մուտք՝ 23.04.2022):

**Հին Արևելքը, Ե. Չարենցը և Հին Եգիպտոսը, Ե. Չարենցը և հին Եգիպտական պոեզիան, Ե. Չարենցը և համաշխարհային գրականությունը, Ե. Չարենցը և ռուսական խորհրդապաշտությունը և այլն:**

Հարցադրումների այդ շարքում առանձնահատուկ կարևորություն ունի «Եղիշե Չարենցը և Կոնստանտին Բալմոնտը» խնդիրը: Գրական ամբողջ ճանապարհի ընթացքում՝ վաղ շրջանի պոեզիայից մինչև կյանքի վերջը, հայ բանաստեղծը առանձնահատուկ ուշադրությամբ հետազոտել և ստեղծագործաբար յուրացրել է 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի առաջին կեսի ռուս նշանավոր բանաստեղծի, արձակագրի, թարգմանչի, խորհրդապաշտության մեծագույն դեմքերից մեկի գրական փորձը: Մի կարճ շրջան միայն՝ 1922-1923 թթ., Ե. Չարենցը նորահայտ պրոլետգրականության դիրքերից քննադատում էր Կ. Բալմոնտի իդեալիստական աշխարհայացքը: Բայց նույնիսկ այդ ժամանակ նա ««Ապադասակարգային ինտելիգենտը» և դեկլարացիան» և «Արդի ռուսական պոեզիան» հոդվածներում մեծ ակնածանքով է խոսում Կ. Բալմոնտի բանաստեղծական արվեստի, պատկերավորության և լեզվի նրբության մասին, որոնցից շատ բան էր սովորել իր գրական մուտքի տարիներին. «Այդ լեզուն իր զարմանալի նրբությամբ գերազանցեց բոլոր նախկին պոետների լեզվին, – այդ լեզվի մասին է, որ գրել է Բալմոնտը իր զարմանալի նվագուն տողերը»<sup>65</sup>: Մինչև կյանքի վերջը Ե. Չարենցը պահպանեց ակնածանքը և ուշադրությունը ռուս մեծ բանաստեղծի նկատմամբ: 1937 թ. նա թարգմանել է Կ. Բալմոնտի «Սև ծովի եզերքին» բանաստեղծությունը<sup>66</sup>:

**Մեռյալների Ամենտի թագավորության բալմոնտյան և չարենցյան ըմբռումներում խաչաձևվում են խորհրդապաշտության երկու գլխավոր սկզբունքներ՝ ընդգծված ուշադրությունը Հին Արևելքի դիցաբանության նկատմամբ և այնտեղից անդրաշխարհային կյանքի հատկանուն խորհրդանիշների պեղումը:**

Հին ու նոր քսան լեզուների տիրապետող Կոնստանտին Բալմոնտը, ի թիվս այլ քաղաքակրթությունների, խորությամբ հետազոտել է նաև Հին Եգիպտոսի պատմությունը, մշակույթը, դիցաբանությունն ու գրականությունը: Ռուս գրականագետների ձևակերպած բալմոնտյան

65 Չարենց Ե., Երկերի ժողովածու, հատ. 6, էջ 58:

66 Տե՛ս Չարենց Ե., Անտիպ և չհավաքված երկեր, Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1983, էջ 430:

«Եգիպտամանիայի» մեջ առանձնահատուկ տեղ է գրավում հին Եգիպտացիների անդրշիրիմյան աշխարհի՝ Ամենտի եզերքի փիլիսոփայական և գեղարվեստական իմաստավորումը: Այն ծավալվել է առավելապես 1900-1910-ական թթ. և ընթացել երեք հիմնական ուղղություններով՝ թարգմանություններ, ուղեգրական նորագրություն և Ամենտի եզերքին նվիրված բանաստեղծություններ:

1908 թ. Կ. Բալմոնտը հրատարակել է «Հների հիմները, երգերը և մտահղացումները» վերնագրով մի ժողովածու, որում, ի թիվս այլ երկրների, տեղ են գտել նաև Հին Եգիպտոսի պոեզիայից կատարված թարգմանություններ՝ անհրաժեշտ ծանոթագրություններով: «Եգիպտոս» բաժնի գործերը քաղված են բացառապես «Մեռյալների գրքից»: Առաջինը Ռա արևի աստծուն հղված մի հիմներգ է, որի արձագանքը կամ բանաստեղծական զուգահեռը դժվար չէ նկատել Ե. Չարենցի «Մարի, էգ թռչուն» լիրիկական բալլադում.

**Այս, մարդու հոգին, ասում են, առաջ  
Ապրել է այնտեղ – արևի վրա,  
Եղել է վառման խնդագին երազ,  
Հրոտ, հրանագ, ու անունը – Ռա:  
Վառվել է անմար արևի հոգում՝  
Ինքը գոհ իրեն ու գոհաբերող,  
Ու սփռել է մութ օրերի միգում  
Հրդեհ ու կարոտ, ցանկություն ու դող:  
Ու եղել է այս կյանքը երկրային  
Արևի առաջ խանձված մի գոհ.  
Աղոթք են արել հրական Ռային –  
Ապրել են հրում ու անցել են գոհ<sup>67</sup>:**

Ի դեպ, «Մարի, էգ թռչուն» բալլադը եգիպտական դիցաբանության նկատմամբ Ե. Չարենցի բանաստեղծական հետաքրքրության առաջին դրսևորումներից մեկն է և նույնպես գրվել է 1916 թ.՝ «Ամենտի» գրքի հղացման շրջանում:

Առաջին հիմներգից անմիջապես հետո Կ. Բալմոնտը տեղադրել է «Հերքող խոստովանություն» («Исповедь отрицающая») բա-

67 Չարենց Ե., Երկերի ժողովածու վեց հատորով, հատ. 1, էջ 59-60:

նաստեղծությունը՝ բաղկացած 42 հատվածից: Դա բանաստեղծական թարգմանությունն է հին եգիպտական «Մեռյալների գրքի» 125-րդ գլխի մի հատվածի՝ Օսիրիսի դատի ժամանակ սրտի կշռմանը գուգահեռ արտասանվող պաշտպանական խոսքի, որի մեջ հանգուցյալը անվանապես դիմում է եգիպտական 42 աստվածներին: Հենց այս ստեղծագործության մեջ էլ հիշատակվում է Ամենտի աշխարհը.

**Тебе, что пришёл из Аменти, с закатных пришёл берегов, –  
Привет! Я во лжи неповинен, облыжных не ведаю слов<sup>68</sup>.**

Կ. Բավմոնտի թարգմանած «Մեծ աստվածների մեջ հայտնվելու մասին» փոքրիկ բանաստեղծությունը Ամենտի աշխարհի պատկերը ներկայացնում է ավելի որոշակիորեն: Հերոսն իրեն զգում է Ամենտիում՝ մեծ աստվածների կողքին, քանի որ իր սիրտը մաքուր է.

**Я сижу меж великих Богов,  
Путь к Великому Дому сам себе я нашёл.  
И летучка крылатая, что зовут – богомол,  
Проводила меня вплоть до сих берегов,  
Где, в Аменти, я вижу великих Богов,  
Я гляжу с ликованием на них,  
Как вокруг излучается их красота,  
И не страшно мне их,  
Ибо в сердце моём чистота<sup>69</sup>.**

«Վերածնության թռչունի փոխակերպվելու մասին» բանաստեղծության մեջ մարդը դարձյալ զգում է ծնունդը «Ամենտիում՝ վախճանի, մուտքի երկրում»: Իսկ «Լոտոսի փոխակերպվելու մասին» բանաստեղծության մեջ, որում ուղղակի խոսք չկա մեռյալների աշխարհի մասին, մաքուր լոտոսի վերածված հերոսը հայտնվում է այնտեղ, որտեղ Օսիրիսի և Իսիդայի որդին՝ «Հորուսը, անցել է իր ամբողջ ուղին»<sup>70</sup>: «Հիմն մայր մտնող արևին» օրհներգում, որ նույն-

68 Бальмонт К. Д., Гимны, песни и замыслы древних, СПб, «Пантеон», 1908, с. 23.

69 Նույն տեղում, էջ 28:

70 Ինչպես նշել ենք, 1937 թ. Ե. Չարենցը գրել է «Լոտոս» բանաստեղծությունը, որը տարիների հեռավորությունից մի տեսակ կամուրջ է կապում վաղ շրջանում իր ստեղծած եգիպտական պատկերների հետ:

պես արևի՝ Ռա աստծու փառաբանություն է, նախ հիշատակվում է հորիզոնի գծի վրա, անդորրի մեջ փռված Ամենտին: Իսկ հիմնի վերջնամասում ուղղակիորեն պատկերված է Ամենտի աշխարհում հայտնված մեռյալի հարությունը: Թողած մութ գերեզմանը՝ նա լողում է լազուր երկնքում: Այնտեղ «փայլում են Ամենտի աշխարհի մեծ Աստվածները» («И великие Боги Аменты сияют»), որոնք գտնվում են Մայրամուտի գծի և Արևելյան սահմանի վրա («На Закатной черте и на грани Восточной»): Օսիրիսը և մայր Իսիդան այնտեղ են կանչում վերակենդանացած հոգուն:

**Души в бледном Аменты кричат тебе: Сила,  
Жизнь, Здоровье! Хвала Огнеблеску! Хвала! —  
Мать Изида, что любит и вечно любила,  
Обнимает лучистого сына, светла.  
Ты встаёшь, ты – живой, в дымно-тёмном портале,  
Твой отец две руки простирает во мгле,  
Поднимает тебя, ты в текущем опале,  
Ты горишь, ты глядишь, Божество на Земле...  
...Пред владыкой владык, тем, кто есть Озирис.  
О, блистательный в ужасах, страхом овитый,  
К горизонту Аменты склонившийся взор<sup>71</sup>.**

Տպավորությունն այն է, որ Կ. Բալմոնտը հին եգիպտական պոեզիայից քաղել և թարգմանել է գերազանցապես այնպիսի գործեր, որոնց մեջ ցոլանում է հին եգիպտացիների դիցաբանական գլխավոր պատկերացումներից մեկը՝ Ամենտի կոչվող մեռյալների անդրշիրիմյան թագավորությունը: Այդ միտումը, ինչպես նաև Ամենտի աշխարհի կոնցեպցիան և գեղարվեստական ձևավորումը ութինը տարի հետո փոխանցվել են ֆրանսիական և հատկապես ռուսական խորհրդապաշտության մոգական դաշտում հայտնված Եղիշե Չարենցին: Այդ հոգեհարազատության ուղղակի հավաստումն են նաև այն «պարզաբանող բացատրությունները», որ եգիպտական պոեզիայի մասին «Հների հիմները, երգերը և մտահղացումները» գրքի վերջում տվել է Կ. Բալմոնտը: Անուններին տրված շատ ուշագրավ ծանոթագրությունների մեջ առանձնապես կարևոր է «Ամեն-

71 Նույն տեղում, էջ 33-34:



տի» բառի բացատրությունը, որ գիտնական թարգմանիչը սկսում է այսպես. «Ամենտի – Մայրամուտային եզերք, Մայր մտնող Արևի և մահվան հովանու աշխարհ»<sup>72</sup>: Այս բնորոշման սկզբնամասը ակնհայտորեն ազդել է նախապես «Ամենտի Երկրում» վերնագրված չարենցյան բանաստեղծության տողատակի ծանոթագրության վրա (**«Ամենտի – Մայրամուտային, Անդրշիրիմյան եզերք՝ Եգիպտական միֆալոգիայում»**): Շարունակությունը գիտական բնորոշումներով և բանաստեղծական ընկալման շեշտադրումներով լույս է սփռում թե՛ Կ. Բալմոնտի, թե՛ Ե. Չարենցի Ամենտի աշխարհների վրա. «Նրա տիրակալը Օսիրիսն է: Այդ Մահվան Հովանու միջով գիշերը Արևը պետք է անցնի իր ուղին: Ամենտին բաժանված է տաներկու մասերի՝ դաշտերով, քաղաքներով, տներով, իսկ այդ ամենի միջով հոսում է գետը, որով Արևը իր նավակով անցնում է հակառակ ուղին դեպի Արևելյան եզերք: Բազմաթիվ դևեր՝ կենդանու և մարդու արտաքինով, հատկապես օձի կերպարանքով, պաշարում են նրա ուղին: «Նա, որ Ամենտիում է» – Օսիրիսն է մուսիայի տեսքով: Հեռացողը, նույնանալով Օսիրիսի հետ, հաղթեց իր բոլոր թշնամիներին և, ինչպես ճաճանչափայլ Ռան, անցավ Գիշերվա միջով, որպեսզի կանգնի Արևելքում: Այդպես էլ եգիպտացին, կատարելով պատգամները, թողնելով այս կյանքը, անցնում է Մահվան Հովանոցը և մտնում է Երանելի Կյանք»<sup>73</sup>: Իսկ այս վերջին բնորոշման հետ փոխկանչի են գնում երկրային կյանքից հեռանալու և մահվան միջով Ամենտի գնալու պատկերները Ե. Չարենցի «Ծիածանի» որոշ բանաստեղծություններում և «Տաղ անձնական» բանաստեղծության հանրահայտ հանգուցալուծումը:

1909 թ. վերջերին Կ. Բալմոնտը գերմանական նավով Մարսելից ուղևորվեց Եգիպտոս: Այդ ճամփորդությանը նվիրված ակնարկները կազմեցին գրողի մի արձակ գիրքը, որը **«Օսիրիսի եզերքը»** բնորոշ վերնագրով լույս տեսավ 1914 թ.: Նորագրության մեծ մասը նույնպես նվիրված է հին եգիպտական մեռյալների թագավորությանը. Օսիրիսի եզերքը նույն Ամենտի եզերքն է:

Եգիպտոսի հնավայրերում իր կատարած դիտարկումներն ու տպավորությունները Կ. Բալմոնտը հարստացրել է հին եգիպտա-

72 Նույն տեղում, էջ 196:

73 Նույն տեղում, էջ 196-197:

կան սկզբնաղբյուրներից, հատկապես «Մեռյալների գրքից» վերցրած հատվածներով ու բնաբաններով՝ վկայակոչելով եգիպտագիտության հսկաներին: Անվանապես հիշատակվում են եգիպտական դամբարանների բարեխիղճ հետազոտողներ Շամպոլյոնը, Մարիետտը, Մասպերոն, Լեփսիուսը, Բաջը, Ֆլինդերս-Պետրին և Նավիլը, մեջբերումներ են արվում Ալեքսանդր Մորեի նոր լույս տեսած «Փարավոնների ժամանակներում» գրքից (1913): Ակնարկային գրականության ժանրը Կ. Բալմոնտը համեմում է սեփական բանաստեղծական հատվածներով: Ուղեգրության նոթերը բաժանված են տրամաբանական հաջորդականությամբ շաղկապված և պերճախոս վերնագրերով օժտված գլուխների, որոնք մեռյալների աշխարհի թեման ներկայացնում են տարբեր տեսանկյուններից:

«Նեղոս» գլխում, օրինակ, հեղինակը կատարում է մի զուգադրում, որ չի հանդիպում Հին Եգիպտոսին վերաբերող ծովածավալ գրականության ուրիշ էջերում և բանաստեղծական համեմատության խորքում թաքցնում է եգիպտական դիցաբանության գիտական խոր իմացությունը: Խոսքը Նեղոս-Ամենտի զուգադրման մասին է: Նեղոսը եգիպտացիների համար աստված էր, անգամ աստվածների հայր: Իրենց սրբազան գետին նվիրված տաճար նրանք չունեին, բայց ստեղծել են նրան նվիրված օրհներգ («Հիմն Նեղոսին»): Նեղոսի աստվածային խորհուրդը ջրագրկվելով ցամաքելու, բայց հետո հորդանալով ինքնավերականգնվելու, այսինքն՝ վերածնվելու ունակությունն է (ուրիշ աղբյուրներ այս դիցաբանական պատկերացումը կապում են երկնքի ամենապայծառ աստղի՝ Սիրիուսի խամրելու, հետո նորից պայծառանալու հետ): Կ. Բալմոնտը այդ մասին գրում է. «Եգիպտացիները Նեղոսի մասին ասում էին, որ նա միակն է, որ ծնում է իրեն: Ինչպես Արևը, ամեն օր մեռնելով, վերստին ծնվում է ամեն առավոտ, այնպես էլ Նեղոսը, ամեն տարի չորանալով, ամեն տարի ցնծում է վերածնվելով՝ տոնելով իր հորդացումը, այդպես էլ Օսիրիսը, իսկ Օսիրիսի հետ միասին՝ արժանավայել ապրած ամեն մի հանգուցյալ, որը, իր կյանքն ավարտելով մահվան քնով, վերածնվում է անմահ կյանքի համար մայրամուտային Ամենտի եզերքում»<sup>74</sup>:

---

74 Бальмонт К. Д., Собрание сочинений в семи томах, т. 6, М., «Книжный Клуб Книговек», 2010, с. 21.

Սակայն, Կ. Բալմոնտի տեսության համաձայն, անդրշիրիսյան աշխարհի եգիպտական կոնցեպցիայում գլխավոր մեծությունը Արևն է: «Օսիրիսի եզերքը» գրքի «Արևային միաստվածություն» ընտիր գլխում նա պարզաբանում է Արևի պաշտամունքի խորքային առնչությունը Ամենտիի հետ: Հենց Արևն է, որ, արևմուտքում մայր մտնելով և արևելքում նորից ծագելով, ուժ ու հավատ է տալիս հարության առասպելին: Էությանը այս կամ այն կերպ նրա հետ են կապված ոչ միայն Ամենտի եզերքի աստվածները՝ Օսիրիսը, Իսիդան, Հորուսը, այլև հավերժական կյանքի ձգտող բոլոր մահկանացուները:

**«Ո՛վ չի փառաբանում Արևը:  
Ե՛վ միջատը, և՛ թռչունը, և՛ ֆելլահը, և՛ Փարավոնը:  
Հոգու ուղեցույց. մութ երկրից մինչև Ամենտի, որտեղ երեկոյան լույս է»<sup>75</sup>:**

Բավական հետաքրքիր են և գիտական ու գեղարվեստական արժեք ունեն նաև գրքի այն մասերը, որոնք նվիրված են Հին Եգիպտոսի պատմության փուլերին (Հին թագավորություն, Միջին թագավորություն, Նոր թագավորություն), մարդու էության ինը տարբեր բաղադրիչներին («**հաթ**», «**ար**», «**բա**», «**կա**» և այլն), կրկնորդի գաղափարին և հարակից այլ հարցերի: Մասնավորապես չարենցյան Ամենտի եզերքի փիլիսոփայական նրբությունները ավելի հստակ պատկերացնելու առումով շատ կարևոր է հոգու կոնցեպցիայի բալմոնտյան մեկնաբանությունը: Հոգին (ըստ որոշ ընկալումների՝ «**բա**») մարդու հետ գնում է Ամենտի, իսկ նրա կրկնորդը («**կա**») մնում է գերեզմանում՝ մումիայի մեջ, բայց կարող է նաև դուրս գալ և թափառել: Նման բացատրությամբ բավական որոշակիանում են թե՛ Ե. Չարենցի «**Հոգին չի մեռնում**» բանաստեղծական հայեցողությունը, թե՛ Վ. Խլերնիկովի «Կա» վիպակի խրթին այլաբանությունը:

Սակայն Կոնստանտին Բալմոնտի եգիպտական ակնարկներում առանցքայինը Ամենտի եզերքի կենտրոնական գաղափարի՝ անմահության ձգտման և դրա գլխավոր մարմնավորողի՝ Օսիրիսի էու-

<sup>75</sup> Նույն տեղում, էջ 31:

թյան պարզաբանումն է: Փոքր-ինչ չափազանցված է թվում մեծ մտածողի այն պնդումը, թե եգիպտացիները հին աշխարհի միակ ժողովուրդն էին, որ ունեին թաղման դիցաբանական հատուկ ծես: Բայց անվերապահ ձմարտություն է դեռևս Հերոդոտոսի ակնարկած այն միտքը, որ **հին եգիպտացիները անմահության գաղափարն ըստ ամենայնի մշակած և Ամենտի անունով հանգամանորեն ձևակերպած առաջին ժողովուրդն էին մարդկության պատմության մեջ:**

Հին եգիպտացին ձգտում էր չոչնչանալու, ապրելու նաև մահվանից հետո: Մումիաները այդ երազանքի առարկայական արտահայտությունն էին, իսկ հոգու ուսմունքը և հարության առասպելը՝ հոգևոր-գաղափարական: Մարդը ամբողջ կյանքում պատրաստվում էր անմահությանը. աշխատում էր ապրել մաքուր, անգիր անելու աստիճանի ուսումնասիրում էր «Մեռյալների գիրքը»: Անմահության ձգտումը մարմնավորվում էր անգամ Հին Եգիպտոսի խորհրդանշանների մեջ: Չվաճն բռնակով խաչաձև բանալիները, որ պատկերված էին վիթխարի տաճարներում, հավատացյալին խոստանում էին անմահություն, ինչպես պտտվող սվաստիկան՝ հին հնդիկներին, և խաչը՝ քրիստոնյաներին. «Հոսում են կյանքի բանալիները, և նա, ով ննջել էր մահվան քնով, գնալով Ամենտի՝ Մայրամուտային Եգերք, վերածնվում է նոր, լուսավորված-նախկին կերպարանքով, երկնային նավով ընթանում է երկնային Նեղոսի վրայով»<sup>76</sup>:

«Լույսով պայծառացած հոգին...» («Душа, озаренная светом...»)՝ բալմոնտյան այս արտահայտությունը, որ հաճախ են մեջբերում ռուս գրողի եգիպտական առնչությունները վերլուծող գրականագետները, շատ լավ է բնորոշում Ամենտի աշխարհում հայտնված մարդու հոգեվիճակը: «Դամբարանների պատումը» գլխում Կ. Բալմոնտը այսպես է ամփոփում մարդու անմահության հավերժական երազանքի համապատկերում հին եգիպտացիների գրաված առաջնային դիրքը. «Մարդկային անմահության գիտակցումը յուրաքանչյուր ազգի սեփականությունն է: Չկա ժողովուրդ, որ չիմանա, որ մահը միայն դուռ է, անցում: Բայց, բացի հինդուսներից և քրիստոնեությունը ստեղծած ժո-

---

76 Նույն տեղում, էջ 16:

ղովուրդներից, ոչ ոք դա այնքան սուր չի զգացել, որքան հին եգիպտացիները»<sup>77</sup>:

Փաստորեն, Կ. Բալմոնտի այս արձակ գիրքը նվիրված է Ամենտի եզերքին: Այն Ամենտի եզերքին վերաբերող միակ գիրքն է համաշխարհային գրականության մեջ: Իսկ ինչպես ցույց է տալիս գրքի վերնագիրը, դա «Օսիրիսի եզերքն» է, և նրա գլխավոր մարմնավորումը, տիրակալը Օսիրիս աստվածն է: «Հարության աստվածը», ինչպես ևս մեկ ակնարկի վերնագրով բնորոշում է հեղինակը, գրքի գլխավոր հերոսն է: «Հոգևոր մարմին հագած և կամքին միաձուլված» հոգին ապրում է Օսիրիսի թագավորության մեջ. «Նա լիարժեք կյանքով ապրում է Ամենտիում, նստում է Օսիրիսի աջում, նա լույսի մեջ է»<sup>78</sup>: Անգամ դազաղը, որ սովորական ուղղանկյան տեսք ուներ, Մեմֆիսի և Թեբեի փառքի օրերին ընկալվում էր որպես մեռյալի իսկական տուն. «Ներքին մակերեսին սովորաբար կարմիր և սև թանաքով զծագրված, գեղեցիկ հիերոգլիֆներով սղագրված «Մեռյալների գրքի» 17-րդ գլուխն էր: Այս գլխում հեռացած օսիրիսականը, Օսիրիսի հավատարիմ սպասավորը մտնում է գեղեցիկ Ամենտի՝ Մայրամուտային Եզերք, հայտնվում Ամնահության օրվա առաջ»<sup>79</sup>: Ինչպես եգիպտական ակնարկների մյուս մասերում, այստեղ էլ հեղինակը հավատարիմ է մնում սկզբնաղբյուրի բնագրին և ոգուն: «Մեռյալների գրքի» 17-րդ գլխում Օսիրիսի խոսքով իսկապես օրհներգվում է մահացածի մուտքը այն «փառավոր անդրաշխարհ, որ գեղեցիկ Ամենտիում է»<sup>80</sup>:

«Ամենտի, և նա, ով Ամենտիում է»,– նաև «Ամենտի» և «Օսիրիս» հասկացությունների հոմանշությունը մատնանշող այս աֆորիզմով կարելի է բնորոշել գրքի էությունը: Առանցքային մոտիվներից մեկը գրքում Օսիրիսի միջն է, սիրելի և սիրող կնոջ՝ Իսիդայի՝ նրա բզկտված մարմնի մասերը հավաքելու և սպանված Օսիրիսին վերակենդանացնելու պատմությունը: Հարություն առած Օսիրիսը դարձավ աստվածը Ամենտի Մայրամուտային Եզերքի, որտեղ իրենց երկրային օրերն ավարտելուց հետո արժանապատիվ կյանքով ապրում են եգիպտացիները: Միֆի ամբողջ ընթացքը Կ. Բալմոնտը

77 Սույն տեղում, էջ 47:

78 Սույն տեղում, էջ 45:

79 Սույն տեղում, էջ 52:

80 The Book of the Dead, An English translation with introduction, notes, etc. by E. A. Wallis Budge, London, "Kegan Paul, Trench, Trubner & Co.", 1898, p. 48.

տեսնում է որպես տեսիլք, երբ Ֆելլախի կառքով շրջում էր եգիպտական հնավայրերում:

Օսիրիսի մահն ու հարությունը, Իսիդայի ողբը և Ամենտի աշխարհի աստվածացումը պատմելուց հետո հեղինակը հատուկ պարզաբանում է նաև այդ թագավորության տեղադրությունը: Տարբեր կարծիքներ կան այն մասին, թե որտեղ է գտնվում Ամենտի եզերքը: Ոմանք ասում են, թե այն Եգիպտոսից դուրս է, ոմանք կարծում են՝ հյուսիսում է, մի մասն ասում է՝ գետնի տակ է, մյուսների կարծիքով՝ այն գետնի վրա է: Իսկ Կ. Բալմոնտը համաձայն է այն տեսակետին, որ Ամենտի եզերքը արևմուտքում է. «Ուրիշներն ասում են, որ Արևմուտքում է, որ դա լեռնային մի նեղ հովիտ է, իսկ հովտի մեջտեղում հոսում է գետը: Ճիշտ է, Արևմուտքում է: Ի վերջո, երեկոյան այնտեղ է գնում Արևը»<sup>81</sup>: Ահա թե որտեղից է բխում և ինչ է նշանակում «Ամենտի՝ Մայրամուտային Եզերք» բնութագրությունը, որ այլոց թվում օգտագործում են նաև Կ. Բալմոնտը և ամենայն հավանականությամբ հենց նրան հետևելով՝ Ե. Չարենցը:

«Օսիրիսի եզերքը» գրքում շարադրված են նաև Օսիրիսի դատի, մեռյալների սիրտը կշռելու դրվագները, հերքման խոստովանությունը և այլն: Դրանք մեզ արդեն լավ ծանոթ են «Մեռյալների գրքից», մեծ եգիպտագետների աշխատություններից, ինչ-որ չափով՝ նաև ռուս և եվրոպացի գրողների գեղարվեստական գործերից: Բայց 1916 թ., երբ Եղիշե Չարենցը իմացավ Ամենտի երկրի գոյության մասին և հղացավ այդ վերնագրով գիրք գրելու միտքը, «Մեռյալների գիրքը» թարգմանված չէր ոչ միայն հայերեն, այլև անգամ ռուսերեն: Եվ քանի որ Կոնստանտին Բալմոնտը, որի գործերը և թարգմանությունները այնքան ուշադիր կարդում էր հայ պատանի բանաստեղծը, ընդամենը երկու տարի առաջ՝ 1914 թ. տպագրած իր գրքում ամենայն մանրամասնությամբ պատմում է այդ ամենը, շատ մեծ է հավանականությունը, որ Ե. Չարենցը Ամենտի եզերքի մասին իմացել և նրանով տարվել է հենց Կ. Բալմոնտի գրքի օգնությամբ: Մասնավորապես այս վարկածով կարելի է բացատրել **«Ու էլ ամեն մեղքի համար սիրտս հիմա ունի ներում»** բանաստեղծական պատկերի գուգադրումը Ամենտի եզերք գնալու համոզվածության հետ, որի ակունքը դժվար չէ կռահել «Օսիրիսի եզերքը» գրքում Կ.

81 Бальмонт К. Д., Собрание сочинений в семи томах, т. 6, с. 73.

Բալմոնտի կատարած «սիրտ-Ամենտի» զուգադրման մեջ. «Փորձության ենթարկվողը կանգնած է կշեռքի մյուս կողմում, և անկախ նրանից՝ ինքն իր վրա վստահ է, թե՞ ոչ, դա սարսափելի պահ է: Իր սրտին է դիմում նա, մինչև այն կկշռվի, նա խոսում է նրա հետ. «Սիրտ իմ, սիրելի՛ս: Սիրտ իմ, սիրելի՛ս: Քո միջոցով ես սկսեցի ապրել, ո՛վ սիրտ: Թույլ մի՛ տուր, որ իմ անունը թառամի:

Թույլ մի՛ տուր, որ ինչ–որ կեղծ բան ծանրության պես ընկնի իմ խոսքի վրա Ամենտի մեծ տիրակալի առաջ»<sup>82</sup>:

Ստեղծագործական առնչությունը, սակայն, ունի նաև ավելի սկզբունքային և խորքային բնույթ: «Արծաթե դարի» ռուսական բանաստեղծության «եգիպտական թեքումը» վերլուծող գրականագետներն ընդգծում են, որ այդ սևեռումն ունի անձնականացած բնույթ: Որոշ ռուս խորհրդապաշտներ իրենց սիրեցյալների հետ հարաբերությունները կառուցում են այնպես, կարծես նրանք Կլեոպատրայի ժամանակակիցներն են: Մասամբ Ա. Պուշկինին հետևելով՝ այդպես են վարվել Վ. Բրյուսովը և Ա. Բլոկը (վերջինս եգիպտական թեմաներով գրել է «Սֆինքս», «Կլեոպատրա» բանաստեղծությունները և «Ռամզես» դրաման): Այս երևույթը արձանագրած Լ. Պանովան ակնարկում է, որ եվրոպացի պառնասականների օգնությամբ Կ. Բալմոնտը հին եգիպտացիներից է փոխառել և յուրացրել «մահվան պրիզման»: Մահվան կոնցեպցիան՝ արտահայտված Ամենտի բանաստեղծական հասկացության մեջ, անձնականացված է թե՛ Կ. Բալմոնտի, թե՛ Ե. Չարենցի ստեղծագործության մեջ: Չարենցյան Ամենտին, օրինակ, միշտ կապված է Կարինե Քոթանձյանի հետ, Ամենտի աշխարհը հավասարապես նվիրված է նաև նրան: «Ռուս գրականությունը,– գրում է Լ. Պանովան,– գիտեր նաև «ես»-ի եգիպտականացման ավելի ինքնատիպ դեպքեր՝ բալմոնտյան և խլեբնիկովյան: Արևի բալմոնտյան պաշտամունքն արտացոլվել է նաև բանաստեղծությունների գրքի վերնագրում՝ «Լինենք արևի պես» (հրատարակված 1903 թ.), և «Արևային ուժ» (1917) հոդվածում»<sup>83</sup>: **Ե. Չարենցի 1910–ական թթ. պոեզիայում, կարելի է ասել՝ նաև ամբողջ ստեղծագործության մեջ վիթխարի տեղ գրավող արևի խորհրդաբանությունը մեծապես կապված է Կ. Բալմոնտի**

82 Նույն տեղում, էջ 75-76:  
83 Панова Л. Г., указ. соч.

**արևերգության հետ, իսկ երկուսը միասին՝ հին եգիպտական պոեզիայի, Ռա աստծուն հղված օրհներգերի և Արևի մայր մտնելն ու վերստին ծագելը խորհրդանշող Ամենտի աշխարհի հետ:**

Մեկ ուրիշ գրականագետ՝ Ն. Մոլչանովան, «Կ. Դ. Բալմոնտը և Եգիպտոսը» հոդվածում անում է նոր բացահայտումներ և անցկացնում գուգահեռներ, որոնք ակնհայտ են դարձնում Եգիպտոսի բալմոնտյան անձնականացման բացառիկ բնույթը: Պարզվում է՝ իր եգիպտական ճանփորդության ժամանակ Կ. Բալմոնտը եղել է կնոջ՝ Ե. Ցվետկովսկայայի հետ: Հավանաբար այդ գործոնը ուժեղացնում է եգիպտական նյութերի անձնական ընկալումը, մասնավորապես՝ Օսիրիսի և Իսիդայի սիրո գոնե ենթագիտակցական շաղկապումը սեփական կյանքին: Դրանից էլ բխում է «Օսիրիսի եգերքը» գրքի չափածո շերտերում և դրանից հետո գրած սիրային բանաստեղծություններում սիրած կնոջը քույր համարելու միտումը, որի մասին Ն. Մոլչանովան գրում է. «Եգիպտական պոեզիայում համընդհանուր ընդունելություն գտած սիրահարների անունները՝ «եղբայր» և «քույր» (իսկ Հին Եգիպտոսում եղբայրներն ու քույրերը կարող էին ամուսնանալ իրար հետ), պարզվեց, արտակարգ համահունչ են Բալմոնտի հետ և՛ մարդկայնորեն, և՛ որպես հեղինակի...»<sup>84</sup>: Այդ մտիվը շուտով արտահայտվեց նաև իր՝ Կ. Բալմոնտի բանաստեղծություններում, օրինակ՝ 1912 թ. գրված «Երկնային ճանապարհ» բանաստեղծության մեջ.

**Так же ль Сёстры любят там и Братья,  
Так же ль нежно слиты Брат с Сестрой?  
Знаю, знаю, все вы без изъятья  
Слиты вместе, звезд пчелиный рой»<sup>85</sup>.**

Բանաստեղծությունը գրվել է Կ. Բալմոնտի եգիպտական ուղևորությունից մի քանի տարի հետո: Այն զետեղվել է «Արշալույսի փայլը» ժողովածուի եգիպտական շարքում և «շրջապատված է» Օսիրիսին և Իսիդային, Ամենտի աշխարհին նվիրված բանաստեղծ-

84 Молчанова Н. А., К. Д. Бальмонт и Египет, [http://yepisheva.ru/index.php?option=com\\_content&view=article&id=214%3Aasp-2-1-3&catid=12%3Aanachnaya-literatura&Itemid=116&fbclid=IwAR2yDpUpG8TQlxIkpQ2g8\\_GgkLiRxMgNuBzilVD42P-2L\\_Alho9ATyPМОИ \(մուտք 26.04.2022\).](http://yepisheva.ru/index.php?option=com_content&view=article&id=214%3Aasp-2-1-3&catid=12%3Aanachnaya-literatura&Itemid=116&fbclid=IwAR2yDpUpG8TQlxIkpQ2g8_GgkLiRxMgNuBzilVD42P-2L_Alho9ATyPМОИ (մուտք 26.04.2022).)

85 Бальмонт К. Д., Зарево зорь, М., «Гриф», 1912, с. 142.



ծություններով: «Ամենտի» չկայացած գիրքը Եղիշե Չարենցը հղացել և սկսել է գրել 1916 թվականի մոսկովյան ուղևորության ժամանակ: Մոսկվայում նա սիրած աղջկա՝ Կարինե Քոթանճյանի հետ էր: Գրքից փրկված մի քանի գործերում, առհասարակ «Ծիածանը» ժողովածուի բանաստեղծություններում բանաստեղծը սիրած էակին բազմիցս դիմում է «քույր» բառով: Դա եղել է Կոնստանտին Բալմոնտի «Օսիրիսի եզերքը» գրքից և մեջբերված բանաստեղծությունից մի քանի տարի հետո:

Եգիպտական ակնարկների ժողովածուն Կ. Բալմոնտը ավարտում է Հին Եգիպտոսի պոեզիայից թարգմանած չափածո գործերով: Գիրքը փակվում է «Իսիդա» հիմներգությամբ, որի մեջ տեղ է գտել Ամենտի եզերքին նվիրված հետևյալ պատկերը.

**Пламя пылающее,  
Край Запредельный дарами своими всегда  
наполняющая,  
Великая при Озирисе в Аменты<sup>86</sup>...**

Իսկ ակնարկների գրքից մի քանի տարի անց՝ 1917 թ., այսինքն՝ չարենցյան Ամենտի եզերքի հետ գրեթե միաժամանակ, Կ. Բալմոնտը գրել է նույն՝ «Օսիրիսի եզերքը» վերնագրով մի բանաստեղծություն (տպագրվել է 1921 թ. Բեռլինում լույս տեսած «Մոնետներ Արևի, մեղրի և Լուսնի» ժողովածուում): Դա մեռյալների թագավորության պատկերավոր նկարագրություն է, որի մեջ շատ հետաքրքիր տող կա նաև Ամենտիի մասին.

**Четырекратно ворожит Судьба.  
Восток и Юг – горячие пожары.  
Закат и Север – свет, когда мы стары.  
Аменты, где окончена борьба<sup>87</sup>.**

Այսպիսով՝ «Մեռյալների գրքից» կատարած թարգմանություններից և Հին Եգիպտոսի դամբարաններին ու անդրշիրիմյան աշխարհին նվիրված «Օսիրիսի եզերքը» ակնարկների գրքից բացի, Կ.

86 Бальмонт К. Д., Собрание сочинений в семи томах, т. 6, с. 163.

87 Бальмонт К. Д., Собрание сочинений в семи томах, т. 5, М., «Книжный Клуб Книговец», 2010, с. 39.

Բալմոնտը գրել է նաև Ամենտի եզերքը պատկերող բանաստեղծություններ: Այդ փաստը էական է այնքանով, որ Ե. Չարենցի Ամենտի եզերքը ունի բացառապես բանաստեղծական բնույթ: Որպես հայ պոեզիայում նախադեպը չունեցող մոտիվ՝ այն պետք է որ ունենար գրական սկզբնաղբյուր: Իր նախընտրած գրական ուղղության՝ խորհրդապաշտության մեծագույն դեմքերից մեկի ձեռքով Ե. Չարենցին մատչելի միակ օտար լեզվով՝ ռուսերենով գրված այդ բանաստեղծությունները կարող են համարվել ներշնչանքի ամենահավանական աղբյուրը: Բալմոնտյան Ամենտի եզերքի ազդեցությունը հավանական դարձնող էական գործոն է նաև այն, որ ինչպես թարգմանությունները և ակնարկների գիրքը, այնպես էլ ռուս բանաստեղծի ստեղծած չափածո գործերը նախորդել են չարենցյան Ամենտի եզերքը պարփակող բանաստեղծություններին, որոնք ստեղծվել են 1916-1919 թթ.: «Հների հիմները, երգերը և մտահղացումները» (1908) թարգմանական ժողովածուից չորս տարի անց՝ 1912 թ., Կ. Բալմոնտը հրատարակել է իր հերթական՝ «Արշալույսի փայլը» բանաստեղծական ժողովածուն: Այդ գրքի վերջին շարքը, որը վերնագրված է «Հանգած հրաբուխներ», ամփոփում է հեղինակի եզիպտական բանաստեղծությունները: Դրանց մեջ այս կամ այն կերպ անդրադարձ կա նաև հին եզիպտացիների անդրշիրիմյան աշխարհին, իսկ մի քանի գործերում Ամենտի սրբավայր տեղանունը հիշատակվում է անվանապես: «Հավատարիմը» բանաստեղծության մեջ Ամենտի եզերքը բանաստեղծորեն պատկերված է որպես երկնային-աստղային լուսաձաձանջ աշխարհ, որ ծնվում է Օսիրիսի միֆից.

**Растерзан Озирис. Четырнадцать частей**

**Повсюду кинуты.**

**Растерзанность есть путь для ищущих людей,**

**Что в мир низринуты.**

**Разрывы сопоставь, и, части распознав,**

**Спаяй конечности.**

**И покидай свой гроб, как стебель свежих трав,**

**Будь в Звездомлечности.**

Аменты – всё в лучах. Изида, неспеша,  
Подходит стройная.  
И колос рдеет вновь. И, взор во взор, душа  
Глядит достойная<sup>88</sup>.

Վերջապես, 1912 թ. Կ. Բալմոնտը գրել է հենց «Ամենտի» վերնագրով մի բանաստեղծություն, որը տեղ է գտել նույն շարքում: Այդ բանաստեղծությունը շատ հետաքրքրական է թե՛ ինքնին, թե՛ վերնագրով, որը մի քանի տարի հետո կարող էր դրդել Ե. Չարենցին իր մի բանաստեղծությունը վերնագրելու «Ամենտի երկրում» և մտահղանալու բանաստեղծական մի ամբողջ գիրք, որ նույնպես վերնագրված էր լինելու «Ամենտի»:

В старинном саркофаге,  
Замкнуты в стройный плен,  
Слова безгласной саги,  
Зеркальность перемен.

Египетские лица,  
Воздушные тела.  
Цветная вереница,  
Вся жизнь, как была была.

Идут стада к ночлегу,  
Растут колосья нив,  
Хранит немую негу  
Богатый их разлив.

Закатного пожара  
Горят огни светло,  
На всём застыла чара,  
Всё в сказку перешло.

Аменты, край предельный,  
Колдует тишина,  
И круг являет цельный  
Огромная Луна<sup>89</sup>.

88 Бальмонт К. Д., Зарево зорь, с. 142-143.

Ամբողջությամբ մեջբերված այս բանաստեղծությունը մի վերջին անգամ հաստատում է Ե. Չարենցի հղացած և մասամբ ստեղծած Ամենտի եզերքի թեմատիկ, գաղափարական, պատկերային և բառապաշարային հարազատությունը ռուս խորհրդապաշտ բանաստեղծ Կ. Բալմոնտի ստեղծագործության մեջ մարմնավորված հին եգիպտական Մայրանուտային անդրշիրիմյան աշխարհի պատկերին: Այս ընդհանրությունը, ստեղծագործական բոլոր տարբերություններով հանդերձ, ունի ինչ-որ չափով բնագանգական թվացող մի ենթիմաստ ևս: Աշխարհագրական տարբեր լայնություններում ապրող, տարբեր լեզուներով ստեղծագործող, տարիքային զգալի տարբերություն ունեցող երկու գրողները մոտավորապես նույն շրջանում՝ 20-րդ դարի սկզբին, խորությամբ և սևեռված որոնում են մարդու անմահության գաղտնիքը: **Երկրային անցողիկ կյանքից հետո իսպառ չանհետանալու, հավերժական կյանքով ապրելու երազանքով նրանք օգնության են կանչում անմահության ուսմունքը մշակած հին եգիպտացիներին:** Երկու մեծ բանաստեղծները վախճանվեցին դարձյալ մոտավորապես նույն շրջանում: Եղիշե Չարենցը մահացավ 1937 թ. Երևանի բանտում՝ պետությունից և մարդկանցից լքված ու մեկուսացած, և նույնիսկ գերեզման չունեցավ: Կոնստանտին Բալմոնտը մահացավ 1942 թ. տարագրության մեջ՝ ֆրանսիական Նուազի լե Գրան քաղաքում, աղքատության մեջ: Նրա թաղմանը ներկա էին ընդամենը մի քանի հարազատ և մտերիմ մարդիկ, իսկ աձյունը հողին հանձնելու ամբողջ ընթացքում տեղում էր հորդառատ անձրև: Կ. Բալմոնտի հեռավոր գերեզմանին գրեթե ոչ ոք չի այցելում: Բայց երկու մեծ մարդկանց, նշանավոր արվեստագետների հոգիները հավանաբար հայտնվեցին իրենց երազած Ամենտի աշխարհում՝ բարձրարվեստ ստեղծագործությամբ անմահանալով ու հավերժանալով տիեզերքի և իրենց կյանք տված ժողովուրդների հիշողության մեջ:

## Եզրակացություններ

Մարդկության ստեղծած մեծագույն արժեքներից մեկը Հին Եգիպտոսի քաղաքակրթությունն է: Հազարամյակներ առաջ ստեղծ-

---

89 Նույն տեղում, էջ 144:

ված նյութական արժեքներից առանձնահատուկ նշանակություն ունեն եգիպտական բուրգերը և դամբարանները՝ մուսիաներով ու սարկոֆագներով: Բայց դրանց մեջ կա նաև հոգևոր-գաղափարական խոր իմաստ: Մարդկության պատմության մեջ եգիպտացիները առաջին ժողովուրդն էին, որ ստեղծեցին մարդու անմահությանը վերաբերող հատուկ մշակված ուսմունք: Այն ուներ կրոնական-դիցաբանական բնույթ: Գոյություն ուներ մեռյալների ճակատագիրը տնօրինող աստվածություն, որի տիրակալն էր մահացած և հարություն առած Օսիրիս աստվածը: Անդրշիրիմյան այդ աշխարհը կոչվում էր Ամենտի: Նրա բովանդակությունը նկարագրված է հին եգիպտական գրականության գլխավոր հուշարձաններից մեկում՝ պապիրուսների վրա գրված «Մեռյալների գիրքը» ստեղծագործության մեջ, ինչպես նաև դամբարանների պատերին և սարկոֆագների վրա պատկերված գեղանկարներում: Այդ ծիսական ու բանաստեղծական գիրքը և Ամենտի եզերքը հանգամանորեն ուսումնասիրվել ու շարունակում են հետազոտվել եգիպտագետների տարբեր սերունդների կողմից: Իր համամարդկային խոր բովանդակությամբ, վառ երևակայությամբ և պատկերավորությամբ Ամենտի թագավորությունը հետաքրքրել է նաև եվրոպացի և ռուս բազմաթիվ գրողների: Իրենց արձակ և չափածո գործերում նրանք կերպավորել են այդ աշխարհը, ստեղծել ինչպես առանձին դրվագներ, այնպես էլ հատկապես նրան նվիրված գործեր: Ամենտի աշխարհին ամենից շատ անդրադարձել է 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի առաջին կեսի ռուս խորհրդապաշտ գրող Կոնստանտին Բալմոնտը: «Մեռյալների գրքից» նրա կատարած թարգմանություններից, Ամենտի աշխարհը պատկերող բանաստեղծություններից և հին եգիպտական անդրշիրիմյան աշխարհի փիլիսոփայական և գեղարվեստական էությունը բացահայտող «Օսիրիսի եզերքը» ակնարկների գրքից կարճ ժամանակ անց Ամենտի եզերքին անդրադարձել է նաև հայ մեծ բանաստեղծ Եղիշե Չարենցը: 1916-1917 թթ. նա մտադրվել էր գրել «Ամենտի» վերնագրով բանաստեղծական գիրք, որի որոշ հղացումներ արտահայտվել են նրա «Ծիածանը» ժողովածուի մեջ: Իսկ 1919 թ. գրած «Տաղ անձնական» հանրահայտ բանաստեղծության մեջ նա պատկերել է հոգու անմահությունը խորհրդանշող Ամենտի եզերքում հայտնվելու իր երազանքը: Եղիշե Չարենցը հայ

միակ հեղինակն է, որ անդրադարձել է Ամենտի աշխարհի թեմային: Այդ ստահղացումն իրագործելու ընթացքում նա օգտագործել է հին եգիպտական դիցաբանության և պոեզիայի ավանդները, համաշխարհային գրականության որոնումները և հատկապես Կոնստանտին Բալմոնտի ստեղծագործական փորձը:

**Սեյրան Զ. Գրիգորյան** – ԵՊՀ հայ նորագույն գրականության ամբիոնի դոցենտ: Գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է հայ նորագույն գրականության պատմությունը, հայ և համաշխարհային գրականության առնչությունները, գրական քննադատությունը: Գրականագիտական 7 գրքերի և 50-ից ավելի հոդվածների հեղինակ է: Ուսումնասիրությունները նվիրված են Եղիշե Չարենցի, Պարույր Սևակի, Վահագն Դավթյանի, Հրանտ Մաթևոսյանի և 20-րդ դարի հայ գրականության այլ ներկայացուցիչների ստեղծագործությանը:

Էլ. huugե՝ sgrigoryan@ysu.am

Summary

## “THE LAND OF AMENTI” IN YEGHISHE CHARENTS’S POETRY AND IN WORLD LITERATURE

Seyran Z. Grigoryan

*Candidate of Sciences in Philology*

**Keywords** – Amenti, Yeghishe Charents, Ancient Egyptian Poetry, “Book of the Dead”, Osiris, Anubis, The afterworld, mythology, Duat, symbolism, Konstantin Balmont.

The article discusses the poetic symbol of Amenti in the poetry of the early period of Armenian poet Yeghishe Charents. In 1916-1919 the young symbolist poet wrote several poems in which he described a conditional area that expresses the idea of human immortality and is called the “Land of Amentia” or “Country of Amenti”. According to the author’s notes, he used ancient Egyptian mythology, where there was a doctrine of the immortality of the soul and an afterlife that embodies this idea, which was called Amenti. In the commentary to one of his poems from the collection “Rainbow” (1917), Ye. Charents explains this world in the following way: “Amenti – Sunset, afterlife in Egyptian mythology”. He

intended to write a whole book of poetry called “Amenti”. This idea was not fully realized, but in some works of the book “Rainbow” and in the poem “Personal Song” (1919), the poet partially expressed his ideas.

The Land of Amenti existed in the mythology and literature of Ancient Egypt. It is depicted in more details in the ancient Egyptian “Book of the Dead”. It describes the entrance of the deceased to the afterlife, the test of his soul, which takes place in the presence of the lord of the Realm of Souls – god Osiris. During the trial, the heart of the deceased is weighed, and the deceased makes a negative defensive confession. The weighing of the heart of the deceased is carried out by Horus – the son of Osiris, and the guide of the dead Anubis – a god with the head of a jackal. If it turns out that the deceased lived a pure life, his soul appears in Amenti and becomes immortal.

The Land of Amenti was studied by famous Egyptologists. His artistic image was created by many European and Russian writers – T. Gautier, G. Ebers, B. Prus, O. Wilde, I. Bunin, V. Khlebnikov and others. Of all the writers, the Russian symbolist poet Konstantin Balmont was most often and deeply addressed to the Land of Amenti. He translated several chapters from the "Book of the Dead", traveled around Egypt and wrote a book of essays “The Land of Osiris” about the Realm of Souls of the ancient Egyptians, as well as poems about Amenti.

The analysis of the texts indicates that Ye. Charents was familiar with ancient Egyptian sources and new literature depicting the Land of Amenti. But, being a symbolist poet, Yeghishe Charents was most of all influenced by the work of one of the largest representatives of Russian symbolism K. Balmont. His works were written in Russian, which was the only foreign language available for the Armenian poet. In addition, they were published several years before the idea of the book “Amenti” by Ye. Charents appeared – in 1908-1914. His poems have ideological, psychological and artistic similarities with the works of K. Balmont.

Using the rich experience of world literature, Ye. Charents created a symbol of the Land of Amenti in Armenian. This is the only example of the artistic interpretation of the ancient Egyptian Realm of Souls in Armenian literature.

## «КРАЙ АМЕНТИ» В ПОЭЗИИ ЕГИШЕ ЧАРЕНЦА И В МИРОВОЙ ЛИТЕРАТУРЕ

Сейран З. Григорян  
*Кандидат филол. наук*

**Ключевые слова** - Аменти, Егише Чаренц, древнеегипетская поэзия, «Книга Мертвых», Осирис, Анубис, загробный мир, мифология, Дуат, символизм, Константин Бальмонт.

В статье рассматривается поэтический символ «Аменти» – загробного мира – в поэзии раннего периода армянского поэта Егише Чаренца. В 1916-1919 гг. молодой поэт-символист в нескольких своих стихотворениях описал условный край как идею человеческого бессмертия, дав ему название «Край Аменти», или «Земля Аменти». Как отмечает автор, он использовал древнеегипетскую мифологию, где существовало учение о бессмертии души и воплощающий эту идею загробный мир, который назывался Аменти. В комментарии к одному своему стихотворению из сборника «Радуга» (1917 г.) Е. Чаренц объясняет этот мир так: «Аменти – Закатный, загробный край в египетской мифологии». Поэт намеревался написать целую книгу стихов под названием «Аменти». Эта идея не была полностью реализована, но в некоторых произведениях сборника «Радуга» и в стихотворении «Личная песнь» (1919 г.) поэт частично выразил свои задумки.

Край Аменти существовал в мифологии и литературе Древнего Египта. Подробно он изображен в древнеегипетской «Книге мертвых». В ней описывается вход умершего в загробный мир, испытание его души, которое проводят в присутствии правителя царства мертвых – бога Осириса. Во время суда взвешивают сердце покойного, который произносит оправдательную защитную исповедь. Взвешивание сердца усопшего проводят сын Осириса Гор и проводник мертвых Анубис – бог с головой шакала. Если оказывается, что умерший прожил чистую жизнь, его душа попадает в Аменти и становится бессмертной.

Край Аменти изучали знаменитые египтологи. Его художественный образ создавали многие европейские и русские писатели – Т. Готье, Г. Эберс, Б. Прус, О. Уайльд, И. Бунин, В. Хлебников и другие. Из всех писателей к образу края Аменти чаще обращался и глубже изучал его русский поэт-сим-



волист Константин Бальмонт. Он перевел несколько отрывков из «Книги Мертвых», путешествовал по Египту и написал книгу очерков «Край Осириса» о царстве мертвых древних египтян, а также стихи об Аменти.

Анализ текстов стихов Е. Чаренца показывает, что поэт был знаком с древнеегипетскими источниками и новой литературой, где изображался край Аменти. Но, будучи поэтом-символистом, Егише Чаренц в значительной степени находился под влиянием творчества одного из крупнейших представителей русского символизма К. Бальмонта, произведения которого были написаны на русском языке, единственном иностранном языке, доступном армянскому поэту. Кроме этого, стихи К. Бальмонта были опубликованы за несколько лет до возникновения идеи книги Е. Чаренца «Аменти» – в 1908-1914 гг. Стихи Е. Чаренца имеют идейное, психологическое и художественное сходство с произведениями К. Бальмонта.

Используя богатый опыт мировой литературы, Е. Чаренц создал художественный образ края Аменти на армянском языке как символ загробного мира. Это единственный пример художественного осмысления древнеегипетского царства мертвых в армянской литературе.

## REFERENCES

1. **Aghababyan S. B.**, Yeghishe Ch'arents', girk' 1, Yer., Haykakan SSH GA hrat., 1973 (**In Armenian**).
2. **Alek'sanyan A. V.**, Yeghishe Ch'arents'ë yev yevropakan grakan avanduyt'ë, Yer., "Antares", 2021 (**In Armenian**).
3. **Ank A.**, Po sledam Anubisa, [https://ridero.ru/books/po\\_sledam\\_anubisa/freeText](https://ridero.ru/books/po_sledam_anubisa/freeText) (**In Russian**).
4. Astvatsneri zhamanakë. Hin yegiptakan poezia, Yer., "Sargis Khach'ents'", 2007 (**In Armenian**).
5. **Axmatova A. A.**, Sochineniya v dvux tomax, tom 1, M., "Pravda", 1990 (**In Russian**).
6. **Badzh U.**, Bogi jegiptyan. Carstvo sveta, ili Tajny zagrobnogo mira, M., ZAO "Centropoligraf", 2014 (**In Russian**).
7. **Bal'mont K. D.**, Gimny, pesni i zamysly drevnix, SPb, "Panteon", 1908 (**In Russian**).
8. **Bal'mont K. D.**, Sobranie sochinenij v semi tomax, t. 5, M., "Knizhnyj Klub Knigovek", 2010 (**In Russian**).
9. **Bal'mont K. D.**, Sobranie sochinenij v semi tomax, t. 6, M., "Knizhnyj Klub Knigovek", 2010 (**In Russian**).
10. **Bal'mont K. D.**, Zarevo zor', M., "Grif", 1912 (**In Russian**).
11. **Baran H.**, O Xlebnikove. Konteksty, istochniki, mify, M., Rossijskij gosudarstvennyj gumanitarnyj universitet, 2002 (**In Russian**).
12. **Blavatskaja E. P.**, Teosofskij slovar'. Izd. 2-e, ispravlennoe, M., Izd. "Sfera" Rossijskogo Teosofskogo Obshchestva, 1994 (**In Russian**).
13. **Bogunova A.**, Skandal v Duate, <https://readli.net/chitat-online/?b=1092954&pg=1> (**In Russian**).

14. **Brokgauz F. A., Efron I. A.**, Enciklopedičeskij slovar', tom 1A (2), Sankt-Peterburg, Semenovskaya Tipo Litografiya (I. A Efrona), 1890 **(In Russian)**.
15. "Byurakn", handes azgayin, gitakan, grakan yev k'aghak'an, K. Polis, 1903, N 47 **(In Armenian)**.
16. **Ch'arents' Ye.**, Antip yev ch'havak'vats yerker, Yer., Haykakan SSH GA hrat., 1983 **(In Armenian)**.
17. **Ch'arents' Ye.**, Banasteghtsut'yunner. Tsiatsanč, M., 1917 **(In Armenian)**.
18. **Ch'arents' Ye.**, Yerkeri zhoghovatsu, hat. 1, M., Petakan hrat., 1922 **(In Armenian)**.
19. **Ch'arents' Ye.**, Yerkeri zhoghovatsu vets' hatorov, hat. 1, Yer., Haykakan SSR GA hrat., 1962 **(In Armenian)**.
20. **Ch'arents' Ye.**, Yerkeri zhoghovatsu vets' hatorov, hat. 6, Yer., Haykakan SSR GA hrat., 1967 **(In Armenian)**.
21. **Cherubina de Gabriak**, "Iz "Knigi Mertvyx"",  
<http://www.synnegoria.com/tsvetaeva/WIN/silverage/cherubina/stihi2022.html#0044>  
**(In Russian)**.
22. **Ėbers G.**, Mard em (HOMO SUM). Germanerenits' t'argmanets' St. Malkhasyants', T'iflis, tparan M. D. Rotinyants'I, 1898 **(In Armenian)**.
23. **Ėbers G.**, P'aravoni aghjikč. Patmakan vep. T'argm. G. Shahbudafhyan. T'iflisi hayots' hrat. ěnk., T'iflis, tp. M. Sharadzei, 1893 **(In Armenian)**
24. **Gegel' G. V. F.**, Filosofiya religii v dvux tomax, t. 2, M., "Mysl'", 1977 **(In Russian)**.
25. **Got'e K.**, Aeroport, ili Dva dnya s Anubisom, <https://www.litres.ru/konstantin-gote/aeroport-ili-dva-dnya-s-anubisom/chitat-onlayn/> **(In Russian)**.
26. **Got'e T.**, Nozhka mumii,  
[https://librapage.blogspot.com/2013/12/nogkamumii.html?fbclid=IwAR0pE\\_bqCdWKNvr6BZ8zKDRVLsDsKC7YfN6ti\\_i4Y2SpyrruJONhow6dhr0](https://librapage.blogspot.com/2013/12/nogkamumii.html?fbclid=IwAR0pE_bqCdWKNvr6BZ8zKDRVLsDsKC7YfN6ti_i4Y2SpyrruJONhow6dhr0) **(In Russian)**.
27. **Herodotos**, Patmut'yun inč grqic. t'argmanut'yunč Simon Krkyasharyani, Yer., Haykakan SSH GA hrat., 1986 **(In Armenian)**.
28. Hin Arevelqi poezia, Yer., Yerevani hamalsarani hrat., 1982 **(In Armenian)**.
29. Hin yegiptakan meryalneri girk'č. Menagrut'yun, Yer., "Van Aryan", 2004 **(In Armenian)**.
30. Jegipetskaya Kniga mertvyx. Papirus Ani Britanskogo muzeja. Pervod, vvedenie i kommentarii E.A. Uollesa Badzha / Per. s angl. S. V. Arxipovoj, M., "Aleteja", 2003 **(In Russian)**.
31. **Khoren yepiskopos Mkhit'aryan**, Patmutyun pashtamants' yev kronakan araroghut'yants' hin yev nor azgats', K. Polis, Tpagr. "Harut'yun Asaturyan" grash. ěnk., 1890 **(In Armenian)**.
32. **Malaxieva-Mirovich V. G.**, Xrizalida, Stixotvoreniya, M., "Vodolej", 2013 **(In Russian)**.
33. **Mat'je M. E.**, Drevneegipetskie mifi, M.-L., Izd. AN SSSR, 1956 **(In Russian)**.
34. **Merezhkovskij D. S.**, Tajna trekh, M., "Respublika", 1999 **(In Russian)**.
35. Meryalneri girk'. Lirika. Hin Yegiptos, Yer., "Areresum-Ani", 2004 **(In Armenian)**.
36. **Molchanova N. A.**, K. D. Bal'mont i Egipet,  
[http://yepisheva.ru/index.php?option=com\\_content&view=article&id=214%3Aasp-2-1-3&catid=12%3Aanauchnaya](http://yepisheva.ru/index.php?option=com_content&view=article&id=214%3Aasp-2-1-3&catid=12%3Aanauchnaya)  
literatura&Itemid=116&fbclid=IwAR2yDpUpG8TQlxIkpQ2g8\_GgkLiRxMgNuBzilVD42P-2L\_AIho9ATyfPMOI **(In Russian)**.
37. **Monax Mitrofan**, Kak zhivut nashi umershie i kak budem zhit' i my po smerti, tom II, S.-Peterburg, izdanie E. P. Litvinovoj, 1887 **(In Russian)**
38. .Otechestvennyya zapiski: Tom 210, chast' 9, Peterburg, 1873 **(In Russian)**.

39. **Panova L. G.**, Russkij Egipt. Aleksandrijskaya poetika Mihaila Kuzmina, <http://www.ruthenia.ru/document/539093.html> (In Russian).
40. **Plutarx**, Isida i Osiris, M., “Eksmo”, 2006 (In Russian).
41. Polnoe sobranie sochinenij Boleslava Prusa (Aleksandra Glovackago): Per. s pol’sk. V.I. Manockij, tom pervyj, Kiev; Xar’kov, Juzhno-russkoe kn-vo F.A. Ioganson, 1899 (In Russian).
42. **Raffi**, Erkeri zhoghovatsu 12 hatorov, hat. 11, “Nairi”, 1990 (In Armenian).
43. **Rak I. V.**, Mify Drevnego Jegipta, Jekaterinburg, “U-Faktorija”, 2007 (In Russian).
44. “Russkaya mysl”, M., 1907, N 3, mart (In Russian).
45. **Sassman P.**, Labirint Osirisa, [https://royallib.com/book/sassman\\_pol/labirint\\_osirisa.html?fbclid=IwAR1-PNsqdP4OTGlsK8rUaPG6eUMusFmmZ0LrhN\\_C4vIW1C7x9E1frBm4VEY](https://royallib.com/book/sassman_pol/labirint_osirisa.html?fbclid=IwAR1-PNsqdP4OTGlsK8rUaPG6eUMusFmmZ0LrhN_C4vIW1C7x9E1frBm4VEY) (In Russian).
46. “Sovetakan grakanut’yun”, 1966, N 2 (In Armenian).
47. **Turaev B. A.**, Egipetskaya literatura, tom I. Istoricheskij ocherk drevneeegipetskoj literatury, M., izdanie M. i S. Sabashnikovyx, 1920 (In Russian).
48. **Uajl’d O.**, Polnoe sobranie sochinenij, tom 4, Sankt-Peterburg, Izdatel’: Marks A. F., 1912 (In Russian).
49. **Vergilius Publius Maro**, Ēneakan, Latinerenits’ t’argmanut’yunē, arajabanē ev tsanot’agrut’yunnerē Gohar Muradyani ev Aram T’op’ch’yani, Yer., “Zangak”, 2018 (In Armenian).
50. **Xaggard G. R.**, Kleopatra, Xar’kov, “Klub Semejnogo Dosuga”, 2012 (In Russian).
51. **Xlebnikov V.**, Tvorenija, M., “Sovetskij pisatel’”, 1986 (In Russian).
52. **Zak’aryan A. G.**, Yeghishe Ch’arents’, Kyank’ē, gortsē, zhamanakē, girk’ 1, Yer., Haykakan SSH GA hrat., 1997 (In Armenian).
53. **Zubov A. B.**, Voskresshij Osiris, [https://abzubov.com/new\\_course/lecture\\_017?fbclid=IwAR07rppyxTeELzYyY4xeJZrXhIIGcKbXSMvNakdlcqbL06furqPZORADqEo](https://abzubov.com/new_course/lecture_017?fbclid=IwAR07rppyxTeELzYyY4xeJZrXhIIGcKbXSMvNakdlcqbL06furqPZORADqEo) (In Russian).
54. **Zulumyan B. S.**, Ot klassicheskoy tradicii k simvolizmu: Tumanyan, Teryan, Ch’arents’ (sravnitel’no-statisticheskij analiz), “Studia Litterarum”, 2019, N 4 (In Russian).